№ 290 ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ

1909

ԵՐԵՍՈՒՆԵՕԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

ՉՈՐԵՔՇԱԲԹԻ, 30 ԴԵԿՏԵՄԲԵՐԻ № 290

Տարեկան գինը 10 րուբլի. կէս տարվանը 6 րուբլի.
Առանձին համարները ԱՄԵՆ ՏԵՂ 5 ԿՈՊ.
Թիֆլիսում գրվում են խմբագրատանը.
Մեր հասցէն՝ Тифлисъ, редакція «Мшакъ»
Сергіевская ул., № 5.
Կամ Tiflis, Rédaction «Mschak».
Խմբագրատան տելեֆոն № 253.

ՄՇԱԿ

Խմբագրութիւնը բաց է առաւօտեան 10—2 (բացի կիրակի և տօն օրերից).
Յայտարարութիւնն ընդունվում է ամեն լեզւով
Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր տողատեղին 10 կոպէկ.
Տպարանի տելեֆոն № 228.

ՀԻՄՆԱԴԻՐ ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ.

ԲԱՑՎԱԾ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՇԱԿ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԼՐԱԳՐԻ

ԱՌԱՋԻԿԱՅ 1910 ԹՒԱԿԱՆԻ ՀԱՄԱՐ

(38-ՐԴ ՏԱՐԻ)

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԸ. «Մշակի» տարեկան գինը 10 րուբլի է, 11 ամսվանը նոյնպէս 10 ր., 10 ամսվանը՝ 9 ր., 9 ամսվանը՝ 8 ր., 8 ամսվանը՝ 7 ր., 7 և 6 ամսվանը՝ 6 ր., 5 ամսվանը՝ 5 ր., 4 ամսվանը՝ 4 ր., 3 ամսվանը՝ 3 ր., 1 ամսվանը՝ 80 կ. և 20 կ. պօստի ծախք:

Ամերիկայի բաժանորդները պիտի վճարեն տարեկան 6 դոլլար. Եւրոպայի բաժանորդները՝ 30 ֆրանկ. Պարսկաստանի բաժանորդները՝ 10 րուբլի. Թիւրքիայի բաժանորդները՝ 120 ղրուշ:

Հասցէները փոխելու համար պէտք է ուղարկել նաև հին հասցէն և միևնոյն ժամանակ 40 կ. նամականիշ:

Ի նկատի ունենալով, որ ուշ բաժանորդագրվելու պատճառով ստեղծվում են մի շարք տեխնիքական անյարմարութիւններ, որոնք զրկում են խմբագրութեանը հնարաւորութիւնից յունվարի 1-ից կանոնաւորապէս թերթն ուղարկել բաժանորդներին, ուստի խնդրվում է բաժանորդ գրվել ցանկացողներին վաղօրօք դիմել՝ գրելով հասցէները պարզ և ճշգրիտ: Հին բաժանորդներից խնդրվում է կցնել փոխադր. բլանկի վրա նախկին տպագրված հասցէն իր վրա ունեցած համարով:

Մեր հասցէն. ТИФЛИСЪ, Редакція «МШАКЪ». Արտասահմանից՝ TIFLIS, Rédaction du journal «MSCHAK».

ԱՊԱՌԻԿ ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ ՉԷ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Խորհուրդը

հրաւիրում է պ. պ. անդամներին երկրորդ անգամ նշանակված

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ,

որը կայանալու է չորեքշաբթի, դեկտեմբերի 30-ին, երեկոյեան ժամը 6½-ին Ընկերութեան դահլիճում, Աբաս-Աբադեան հրապ., սեփ. տ. № 7. (Абасъ-Абадская пл. с. д. № 7)

Զբաղման առարկաներն են.

1) Կենտրոնի և ճիւղերի 1910 Թ. նախահաշիւների քննութիւնը և հաստատումը:
2) Զեկուցումն Ս. Պօղոսեանի նուիրաբերած գումարի մասին:
3) Առաջարկութիւն Ս. Պօղոսեանին ընտրել Ընկ. պատւաւոր անդամ:

Այս ժողովը կը կայանայ քանի անդամ որ ներկայ լինի:

(Ե. Հ.) (առ.) 1395. 2—2

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկ. Խորհուրդը

յայտնելով, որ առաջիկայ Նոր-տարվայ եւ Ծննդեան տօների առիթով շնորհակալութեամբ ընդունում է աղքատների համար նուէրներ դրամով, մթերքներով և շորերով, ամեն օր՝ ժամը 9-ից մինչև 2-ը և երեկ. 5-ից մինչև 7-ը՝ Ընկերութեան գրասենեակում (Абасъ-Абадская пл. № 7, с. д.), խոնարհաբար խնդրում է բարեսիրտ ունեւորներին օգնութեան հասնել Թշուառներին:

(Շ. Հ.) (առ.) 1390. 2—2

Առաջիկայ 1910 թ. յունվարից

ԹԻՖԼԻՍՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿՎԵԼՈՒ Է

ԱՄՍԱԳԻՐ „ԱՐՕՐ“ ԱՄՍԱԳԻՐ

ԸՆԴՀԱՆՈՒՐ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ, ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԵԱՄԲ

Ամսագիրը լինելու է անկուսակցական, բայց անպայման առաջադիմական ուղղութեամբ և իր էջերը լայն բացելու է բոլոր այն ձեռնհաս անձանց առաջ, որոնց սրտին մօտ է ընդհանրապէս գեղարուեստական գրականութեան և գիտութեան զարգացումը և մասնաւորապէս հայ գրականութեան և բանասիրութեան զարգացումը ու գիտութիւնների ժողովրդականացումը հայ ժողովրդի մէջ:

Այդ նպատակով ամսագրին մասնակցելու հրաւիրվելու են բոլոր հայ գրական ոյժերը, առանց խտրութեան և քաղաքական ու սոցիալական հայեացքների տարբերութեան, ինչպէս և այն օտարազգի գրողները և գիտնականները, որոնք հետաքրքրվում և պարապում են հայկական բանասիրութեամբ և գրականութեամբ:

«ԱՐՕՐԸ» հրատարակվելու է հետևեալ ծրագրով.

I. Բելլետրիստիկա — վէպեր, վէպիկներ, պատմուածներ — ինքնուրոյն և թարգմանական:
II. Հիմնական յօդուածներ քաղաքական, քաղաքատնտեսական, գրականական և գիտական հարցերի մասին:
III. Գրականական ընդհանուր տեսութիւններ:
IV. Գիտական տեսութիւն:
V. Հայկական, ռուսական և օտարազգի մատենագրութիւն, գրախօսութիւն և քննադատութիւն:
VI. Արևելագիտութիւն (կովկասագիտութիւն, հայագիտութիւն, վրացագիտութիւն):
VII. Թատրոն և երաժշտութիւն:

«Արօրը» բաղկացած է լինելու 8—10 տպագրական թերթից (նաբօրից):

«Արօրի» բաժանորդագինն է տարեկան 6 րուբլի, իսկ «Մշակ» լրագրի ՏԱՐԵԿԱՆ բաժանորդների համար՝ Թիֆլիսում—3 րուբ., Թիֆլիսից դուրս 4 րուբ.: Արտասահման՝ 20 ֆր., իսկ «Մշակի» տարեկան բաժանորդների համար՝ 13 ֆրանկ:

Ծանօթ.—«Մշակի» այն բաժանորդները (Ռուսաստանում), որոնք «Մշակի» տարեկան բաժանորդագին 10 ր. հետ կուղարկեն և 4 րուբլի, ուրեմն միասին 14 րուբլի (միայն Թիֆլիսում 13 րուբ.), կը ստանան և «Արօր» ամսագիրը:

«ԱՐՕՐԻ» խմբագրական կազմը բաղկացած է հետևեալ անձերից. Հ. Առաքելեան (խմբագիր-հրատարակիչ), Ստեփան Մալխասեան, Ռուբէն Խանզադեան, Արամ Նազարբէկեան, Արշալոյս Մխիթարեան (որ և քարտուղար), Պետրոս Զաքարեան: Աշխատակիցների ցուցակը կը հրատարակվի յետոյ:

«Արօրի» գրասենեակը ժամանակաւորապէս զետեղված է «Մշակի» խմբագրութեան մէջ, ուստի բոլոր դիմումները թէ բաժանորդագրութեամբ և թէ այլ գործերով պէտք է ուղղվեն այս հասցէով.

Тифлисъ, въ контору газ. „Мшакъ“. Для передачи редакціи „АРОРЪ“.
Tiflis, Rédaction du journal „Mschak“, pour „Aror“.
Թիֆլիս, գրասենեակ «Մշակի», յանձնել «ԱՐՕՐԻՆ»:

Խմբագիր-հրատարակիչ՝ Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

(Հ. Շ.) (առ.) 1288. 0—8

ՏԱՐՎԱՑ ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ ՄԷԿԸ

Վերջացող տարին իր միւս ժառանգութիւնների հետ միասին թողնում է առաջիկայ 1910 թւի համար և պատրիարքական հրաժարականի խնդիրը:

Կ. Պօլսի հայոց պատրիարքի հրաժարականը դարձաւ մի խոշոր հասարակական և քաղաքական երեւոյթ, որը ունի խոր բարոյական նշանակութիւն:

Այդ հրաժարականը կոչված էր արտայայտելու հայ ժողովրդի տրամադրութիւնը այն ծանրագոյն և վհատութեան հասցնող վիճակի առիթով, որը բաժին էր ընկել հայ տարրին Թիւրքիայում:

Հայ ժողովուրդը պատրիարքի բերանով և պատրիարքի հրաժարականով ասաց Թիւրք կառավարութեանը և Թիւրքական ղեկավար շրջաններին հետևեալը.

— Մենք մեր բոլոր էութեամբ վրդովված ենք այն թոյլ, ներողամիտ և վերին աստիճան կասկածելի վերաբերմունքից, որ ցոյց տուին Թիւրք ղեկավար շրջանները դէպի Ադանայի մասսայական կոտորածի հեղինակները: Մենք չենք կարող անցնել անմեղ նահատակների դիակներով ժպիտներ շռայլելով Թիւրքական կառավարութեան այն պատասխանատու անձերին, որոնցից կախված էր Ադանայի արհաւիրքների լինել չը լինելը և դարձեալ կախված է նրանց կրկնութիւնը Թիւրքահայաստանի զանազան կողմերում: 20,000 զոհերի ուրուականը, իր բողոքող ձայնով, չէր կարող հաշտվել այն դրութեան հետ, որ խրախուսված միան [illegible]բի համար, իսկ նրանց փոխարէն պատժի ենթարկվեն դարձեալ հայերը:

Եւ հրաժարականը ունեցաւ իր բարոյական մեծ արժէքը:

Հրաժարականի երկարատեւութիւնը, անկասկած, անպատեհութիւններ էր ստեղծում հայոց պատրիարքարանի գործավարութեան վերաբերութեամբ. բայց նա, արտայայտութիւն լինելով ժողովրդական մարմնաւորված սրտի և արդարացի գայրոյթի, հանդէս եկաւ բարձրաձայն ասելու՝

— Մենք չենք կարող հաշտվել իրերի այնպիսի վիճակի հետ, երբ օսմանեան քաղաքացին ապահով չէ իր կեանքի և ստացուածքի վերաբերութեամբ:

Եւ Թիւրքական ղեկավար շրջանները այդ զգացին, կամ գոնէ սկսում են գիտակցել:

Ի՞նչ էր, արդարև, հայի դրութիւնը Թիւրքիայում Ադանայի սարսափի օրերում:

Տասնեակ հազարաւոր խաղաղ ժողովրդի մարդիկ մի քանի օրվայ մէջ կոտորվեցին ամենաանգութ, վայրենի ջարդերով: Իսկ քաղաքական աշխարհը լռեց, պետութիւնները դրական լուրջ փորձ չարեցին որևէ ցոյց անելու, որևէ սպառնալիք կարդալու Թիւրքական կառավարութեան:

Եւ հային իրան մնաց սգալու իր սուգը և կուլ տալու իր դառն արցունքները:

Թիւրքական ղեկավար շրջանները չէին ուզում տեսնել այդ սուգը և լսել հայ ժողովրդական մորմոքի թոյլ ակնարկներն անգամ:

Բայց ստիպված եղան հայի զգացմունքների հետ հաշիւ տեսնելու:

Անցան ամիսներ:

Անշուշտ, մօտենում է պատրիարքական հրաժարականի լուծման խնդիրը:

Յիրաւի, Թիւրք կառավարական շրջանները այլ ևս լռել են պատրիարքական իրաւունքների կրճատման խնդրի վերաբերմամբ և քայլեր են անում հարթելու խոչընդոտները պատրիարքարանի և կառավարութեան միջև և տրամադրութիւն են ցոյց տալիս վերջ դնելու այն ներողամիտ վերաբերմունքին, որով նրանք վերաբերվեցին Ադանայի ջարդերի հեղինակներին:

Եթէ Թիւրք կառավարութեան ներկայացուցիչները կարող կը լինեն դրական հաւաստիացումներ տալ Թիւրքահայ ժողովրդի ներկայացուցիչ մարմնին՝ ազգային ժողովին իր պատրիարքով, ապա կը ստեղծվեն պայմաններ՝ վերացնելու կնճիռը ապարէզից:

Ա. Քալանթար

ՎԵՐՋԻՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Պետերբուրգ, 28 դեկտեմբերի

Այսօր բաղդ ունեցան ներկայանալու կայսրին Մեծ Իշխան Միխայէլ Նիկօլայեվիչի թաղմանը եկած պատգամաւորութիւնները, որոնց թւում նաև Կովկասինը: (Հ. Գ.)

Մոսկվա, 28 դեկտեմբերի

Ագնւականների ժողովարանի դահլիճում հանդիսաւորութեամբ բացվեց բընագէտների և բժիշկների տասներկուերորդ համագումարը: Ներկայ էին 4500-ից աւելի մարդ: Նախագահ ընտրըվեց պրոֆ. Անուչինը, օգնականներ՝ ակադեմիկ Պաւլով և Պետերբուրգի համալսարանի րեկտոր Բօրգման: Համագումարը բացվեց Անուչինի ճառով. յետոյ խօսեց Պաւլովը: Առաջին նիստը փակվեց պրոֆ. Եգօրովի ճառով:

Մոսկվա են եկել Ջրուղիների խընդրով զբաղվողները, մօտ 100 մարդ: Համագումարը կը բացվի վաղը: (Հ. Գ.)

Վիլնա, 28 դեկտեմբերի

120 պատգամաւորների ներկայութեամբ բացվեց հրէայ կանանց արհեստագիտական կրթութեան համագումարը: (Հ. Գ.)

Հելսինգֆօրս, 27 դեկտեմբերի

Շրէդէրի ֆիրման խոստովանում է, որ նա [illegible] 1909 Թ. ի ընթացքում ստացել է 15 երկաթէ արկղներով փամփուշտ և զէնք, որոնք ուղարկվում էին Աբօ և այլ քաղաքներ: Արկղները յետ էին ուղարկվում արտասահման Գանգէի միջոցով:

Մաքսատան հսկողութիւնը ներկայումս ուժեղացված է: (Հ. Գ.)

Նէապօլ, 28 դեկտեմբերի

Եկաւ «Բօգատիր» նաւը և խարիսխ ձգեց առաջուց եկած երկու ռուսական նաւերի շարքում: Երկուստեք փոխանակեցին թնդանօթաձգութիւն: (Հ. Գ.)

Տօկիօ, 28 դեկտեմբերի

Մամուլը անհամակրանքով ընդունեց Միացեալ-Նահանգների առաջարկութիւնը՝ յետ գնել մանջուրական երկաթուղիները, գտնելով որ դա հաւասարապէս կը խախտէ Եապօնիայի և Ռուսաստանի շահերը: (Հ. Գ.)

ԹԻՒՐՔԻԱ ԵՒ ՊԱՐՍԿԱՍՏԱՆ

Կ. Պօլիս, 28 դեկտեմբերի

Մինչև կէս գիշեր տևեց Հակկը-բէյի խորհրդակցութիւնը նախկին մինիստրների հետ: Պարզվեց, որ իրանց պաշտօնների մէջ մնում են ֆինանսների մինիստր Ջէվադը և ներքին գործերի մինիստր Թալէաթ-բէյը: Զինուորական մինիստրի պօրտֆէյլը առաջարկվեց գեներալիսիմուս Մահմուդ-Շէվքէթ փաշային, արտաքին գործերինը—Հակկը-բէյը առ այժմ թողնում է իրան:

Յետոյ պարզվեց, որ իրանց պաշտօնի մէջ են մնում նաև ճանապարհների հաղորդակցութեան մինիստր Հալաճեանը, արդարադատութեան մինիստր Մէջիժէդդինը, արտաքին—Րիֆադը: Ծովային, վակուֆների և ժողովրդական կրթութեան պօրտֆէյլները դեռ չեն բաժանված: Հակկը-բէյը շարունակում է բանակցել մինիստրների հետ: (Հ. Գ.)

Թէհրան, 28 դեկտեմբերի

Պարսից դեսպան Պետերբուրգում նշանակվեց Ուրմիայի նահանգապետ Մուխտէշամ-ուս-Սալթանէն: (Հ. Գ.)

ՊՕԼՍԱԿԱՆ ՆԱՄԱԿՆԵՐ

Կ. Պօլիս, 15 դեկտեմբեր

Իսլամական բայրամի առթիւ՝ դահլիճի կարևոր անդամները ճամբորդութեան ելան. Ելևմտական մինիստրն այցելեց դանուբեան պետութիւնները, նախապէս Ռումանիա, ուրկէ անցաւ Բուլղարիա: Ելևմտական մինիստրը մեր դահլիճին այն անդամներէն է, որոնք դրական հաւողումներու ետևէ կը քալեն, ու անշուշտ իր այդ ճամբորդութիւնները կունենան իրենց լաւ արդիւնքները մեր երկրին համար:

Ռումէն պետութիւնը, արդէն բարեկամ Թիւրքիոյ՝ Համիդի օրով, մնաց, սահմանադրութեան ատեն, բարեկամ նոյն Թիւրքիոյ: Բուլղարիա, Կ. Պոլսի ամենէն մօտիկ դրացին, երբեմն ողորմելի հպատակ, ժամանակ մը յեղափոխական տարր Դանուբի վրայ, այնուհետև ազատուած, առանձնաշնորհեալ երկիր իբրև թէ Թիւրքիոյ ամբողջացուցիչ մաս, մէկ տարիէ ի վեր անկախ թագաւորութիւն, այսօր Թիւրքիոյ առջև այն կենդանի ուժն է, որ կարելի չէ արհամարհել:

Սահմանագլուխի վրայ միշտ անօրինակ դէպքեր կուգան վրդովել քաղաքական ակումբները, զբաղեցնել միտքերը: Բուլղար հրոսակախումբերու գործը դեռ վախճանգած չի կարծուիր. յանկարծական շարժում մը, մէկ օրէն միւսը, կրնայ առաջացնել այնպիսի դէպքեր, որոնց եզրակացութիւնը գուցէ շատ դժուար ըլլայ երևակայել:

Ելևմտական մինիստրի այցելութիւնը Ռուսչուկ, անկէ Բուլղարիոյ մայրաքաղաքը՝ թերևս նպատակ ունենայ գտնել միջակէտներ երկու դրացի երկիրներու քաղաքականութեանը մէջ: Ու ամենէն բարեպատեհ առիթներու մէջ է որ տեղի կունենայ մինիստրին այցելութիւնը: Բուլղարիա գուցէ, ուրիշ ատեն, հարևանցի [illegible] այդպիսի այցելութիւն մը, բայց հիմա որ դրացի պետութիւն մը, կրթնած Գերմանիոյ կողքին, իր քաղաքական անյագ նայուածքները կերկարէ վարպետօրէն դէպի Սելանիկի ծոցը, անշուշտ հաճելի իրողութիւն մը չէ:

Ելևմտական մինիստրը յորմէ հետէ մտաւ դանուբեան հողերու վրայ, մեր թերթերու մէջ սկսաւ արձագանգուիլ դաշնակցական գաղափար մը: Չի կարծուիր, որ շուտ՝ մօտ օրով տեղի ունենայ այդպիսի իրողութիւն մը, բայց, հաւանաբար, լրջօրէն պիտի զբաղին այժմէն իսկ հայրենասէր միտքեր, և Բուլղարիա, որ անուշ երազով մը Ֆիլիպէի սահմանները մինչև Էդիրնէ երկարելու անհուն ծարաւովը կը տառապի, գաղտնաբար անշուշտ մէկդի կը թողու այս ծրագիրը և աչքերը կը բարձրացնէ դիտելու իր գլխուն վերև բարձրացած ուրիշ դրօշակ մը:

Հանրօգուտ շինութեանց մինիստրը, Պետրոս Հալաճեան, իր ուղևորութեան մասն ընտրած էր Արևելեան Ռումէլիի նահանգները. նախ և առաջ մտաւ Էդիրնէ, ուր հանրային շինութեանց մեծամեծ ձեռնարկներ ընելու պէտքը զգացուած է, յետոյ մտաւ Սելանիկ՝ Թիւրքիոյ սահմանադրութեան Երուսաղէմը: Ամեն տեղ շատ սիրալիր ընդունելութիւն գտաւ տեղական ազգաբնակութիւններէն՝ իսլամներէն, յոյներէն, բուլղարներէն:

Իսկ ներքին գործերու մինիստրը, Թալէաթ բէյ, մնաց Պոլիս, անշուշտ ունենալով իր ներքին զբաղումները, որոնք թոյլատու չեղան ճամբորդական գիծ մը բռնելու: Իր ներկայութենէն օգտուեցաւ Դպրոցասէր Տիկիններու Ընկերութիւնը, որու խոստացած էր մինիստրը տալ իր նախագահութիւնը նուագահանդէսի մը: Երէկ տեղի ունեցաւ. Թալէաթ-բէյի հետ նուագահանդէսին ներկայ գտնուեցան արտաքին և զատական գործերու մինիստրները: Ձեռնարկը անցաւ շահաւէտ, և ընկերութիւնը կրցաւ ձեռք բերել 4500 րուբլիի գումար մը:

Քաղ. ժողովը, ոգի ի բռին, կաշխատի հարթել պատրիարքին ճամբան դէպի պատրիարքական աթոռ: Սա պէտք է գիտնալ թէ՝ կառավարութիւնը ուղղակի գոհացում տալ չպիտի ուզէ երբեք. անուղղակի ճամբով մը դէպքերը պիտի հասնին այնտեղ, ուր տեսնուի՝ թէ մեր բողոքներուն շարժառիթները մասամբ բարձուած են: Օրինակ՝ Ասաֆը, Ջեբել-Բերեքէթի կայմակամը, բողոքի մեծ առարկայ եղած է: Այդ մարդը թեթև դատապարտութենէ մը ետքը, իբրև թէ փախած, մտաւ Կիպրոս, ու հիմա կրնայ երթալ ուր որ կուզէ։ Դաշլիճը անոր մասին եղած նոր ամբաստանութեանց թուղթերը, հին թուղթերու հետ, պիտի յանձնէ քննութեան։ Եւ որովհետև մեր բողոքներուն մեծ մասը ուղղուած է Ասաֆի դէմ, անոր բացակայութեանը, հաւանաբար, նոր պատիժներ տրուին, ու պատրիարքին ալ ըսուի թէ ահա պատժուեցաւ մեծ ոճրագործը, ինչպէս որ պէտք էր։

Կիլիկիոյ կաթողիկոսը, Ադանայի կուսակալին հետ անձնական տեսակցութենէ մը ետքը, ետ առած է իր հրաժարականը, յուսադրուած՝ որ հետզհետէ կարելի պիտի ըլլայ բաւարարութիւն տալ տեղական պահանջումներու։ Այդ իրողութիւնը լաւ աչքով կը դիտուի Պոլսի մէջ։

«Արևելք», 3-ամսեայ դադարումէ մը ետքը, սկսաւ հրատարակուիլ։ Գրեթէ նոյնն է խմբագրական կազմը։ Իր հրատարակութեան պայմաններու մէջ յանձն կառնէ տարեկան, մօտաւորապէս, 3000 րուբլի գումար մը տալ Ադանայի որբերուն ի նպաստ։ Թէ ո՞րքան յաջողութիւն կունենայ, կը մնայ ճշդել գալիքին մէջ։ Շահէն

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Կ. Հ. Բ. ԸՆԿ. ԱՅՍՕՐՎԱՅ ԸՆԴ. ԺՈՂՈՎԸ

—

Ընդհանուր ժողովը այսօր կոչված է՝ գլխաւորապէս քննելու ընկերութեան 1910 թւի նախահաշիւը, այն է՝ որոշելու նրա գործունէութեան եղանակը և սահմանները առաջիկայ տարվայ համար։

Կ. Հ. Բարեգ. Ընկերութիւնը միշտ եղել է հայ հասարակութեան և հայ մամուլի սիրեցեալ որդեգիրը, նոյնիսկ նրա enfant gâté-ն, եթէ կարելի է այսպէս ասել։ Հասարակութիւնը երբեք չէ զլացել նրան իր համակրութիւնը, աջակցութիւնը, փայփայել, գուրգուրել է նրան, տեսնելով նրա մէջ ազգային մի կարևոր հաստատութիւն, անկեղծօրէն ցանկալով նրա բարգաւաճումը, իսկ մամուլը չէ դադարել երբեք յորդորել, խրախուսել հայ հասարակութիւնը՝ աջակցելու, օգնելու այդ ընկերութեանը, որպէսզի նա հնարաւորութիւն ունենայ իրագործել այն մեծ յոյսերը, որոնք ակնկալվում են նրանից և որոնք դրված են նրա վրա կանոնադրութեամբ։

Բայց եթէ մամուլը իր բարոյական պարտականութիւնն է համարել յորդորել հասարակութիւնը, դրդել նրան գուրգուրանքով, փայփայանքով վերաբերվելու իր կարևոր հաստատութեան, նոյն մամուլը նաև իր բարոյական պարտականութիւնն է համարել քննադատել, յաճախ դատափետել, մերկացնել ընկերութեան ղեկավարների գործունէութիւնը, մերկացնել նրա լաւ և [illegible] կողմերը, ցոյց տալ նրան արդիւնաւէտ գործունէութեան ուղիները։ Եւ մամուլի բարեացակամ, բայց անաչառ քննադատութիւնից ընկերութիւնը երբեք չէ վնասվել և գործիչները երբեք չեն վիրաւորվել։

Եւ, պէտք է ասել, ընկերութեան առաջին շրջանում նա կանգնած է եղել իր կոչման բարձրութեան վրա և, որքան թոյլ են տուել ժամանակի պայմանները, նա կարողացել է փայլուն կերպով կատարել իր միսիան։

Այժմ ընկերութիւնը, մի քանի տարուց ի վեր, թևակոխել է նոր շրջան. այժմ գործունէութեան, արդիւնաւէտ, նպատակայարմար գործունէութեան համար պայմանները անհամեմատ աւելի նպաստաւոր են, քան էին Դունդուկովների, Գոլիցինների ժամանակ։

Հետևաբար, հասարակութիւնը և մամուլը իրաւունք ունեն աւելի շատ բան, աւելի բեղմնաւոր գործունէութիւն պահանջել ընկերութեան այժմեան շրջանից, և ընկերութեան արդի ղեկավարները չը պէտք է տհաճօրէն կամ չարակամօրէն վերաբերվեն մամուլի քննադատութեանը, մամուլի, որ, լինելով արտայայտիչը հասարակական խղճմտանքի, պարտաւոր է երբեք իր բարեացակամ, կազդուրիչ, բայց և անաչառ, դէպի գործունէութիւն, եռանդ, աշխոյժ դրդող քննադատական ձայնը չը լռեցնել։

Այդ պատճառով և մենք պարտք ենք համարում մի քանի նկատողութիւններ անել ընկերութեան նոր շրջանի կենտրոնի գործունէութեան մասին։

Մենք և, անկասկած ենք, մեզ հետ շատերը այն տպաւորութիւնն ենք ստացել, որ կենտրոնի վարիչները տալով ընկերութեան գործունէութեանը արտաքին փայլ դեռ չեն տուել մեծ ներքին բովանդակութիւն։ Անկասկած, ամեն մի կուլտուրական հաստատութիւն պէտք է աշխատէ հմայել հասարակութիւնը դէպի իրան, բայց հմայքը այն ժամանակ ներգործական և տևական կը լինի, երբ ներքին բեղմնաւոր գործունէութիւնն է հմայողը, շլացնողը և ոչ արտաքին, միշուրային գործունէութիւնը, որ կարող է վերջ ի վերջոյ հիասթափութիւն և յուսախաբութիւն առաջ բերել։ Մենք սրանով չենք կամենում ասել, որ ընկերութեան կենտրոնի գործունէութեանը հիմք է ծառայել միայն արտաքին շլացուցիչ փայլը և նա զուրկ է եղել ներքին բովանդակութիւնից. ոչ. այլ միայն շեշտել այն, որ բաւական մեծ դօզայով, չափով ձգտումն է եղել դէպի արտաքին փայլը, ի վնաս ներքին բովանդակութեան և բեղմնաւոր գործունէութեան։ Այդ երևոյթը կարելի է նկատել այն ձգտման մէջ, որ վարչութիւնը աշխատել է շատ թւով պատւաւոր անդամներ ունենալ, էժանացնելով, եթէ կարելի է այսպէս ասել, պատւաւոր անդամի կոչումը, շքեղ բնակարան ունենալ, շատ թւով դպրոցների նպաստել, որպէսզի կարելի լինի ցոյց տալ, թէ ընկերութիւնը պահպանում է դպրոցներ մեծ քանակութեամբ, շքեղ և ճոխ գրադարան ունենալ, թէև յաճախողների թիւը լինի շատ աննշան և այլն։ Մի խօսքով, ընկերութեան դեկորատիվ կողմի վրա աւելի մեծ ուշադրութիւն է դարձվում, քան ներքին, բեղմնաւորական կողմի վրա։

Այդ գիծը կարմիր թելի նման անցնում է վարչութեան ամբողջ գործունէութեան միջով։ Եւ նոյն գիծը նկատվում է նաև առաջիկայ 1910 թ. համար կազմված նախահաշւի մէջ։

Բայց նախ և առաջ մի քանի խօսք մուտքի մասին։ Նախահաշիւը սպասելի եկամուտ ցոյց է տալիս 33,721 ր. 85 կ.։ Սա մի աչքի ընկնող գումար է և պատիւ կը բերէր վարչութեան եռանդին, եթէ նա արդիւնք լինէր այնպիսի աղբիւրների, որոնք բղխէին ուղղակի վարչութեան կամ խորհրդի գործունէութիւնից։ Ոչ. այդ 33,721 ր. 85 կ. գումարի ամենախոշոր մասը, այն է մօտ 24,000 րուբլին, անձեռնմխելի, յատուկ դրամագլուխների տոկոսիքն և անշարժ կալուածներից ստացվող եկամուտներն են կազմում. միայն մօտ 10,000 ր. կազմում են այնպիսի գումարներ, որոնց գանձումը կախված է խորհրդի գործունէութիւնից, այն է՝ անդամակցական վճարներ, նուէրներ, երեկոյթներ և այլն։ Համաձայնեցէք, որ 12 հոգուց բաղկացած մի վարչութեան համար այդ գումարը շատ էլ փայլուն դիպլոմ չէ։

Սակայն անցնենք նախահաշւի ելքին, որի մէջ իսկապէս արտայայտվում է խորհրդի գործունէութիւնը և այն երևոյթը, որի մասին ակնարկեցինք։

Վերոյիշեալ ամբողջ 33,700 ր. գումարի գործադրութիւնը բաժանված է այսպէս. 1) որբանոցի ծախք—5000 ր., 2) դպրոցների պահպանութեան—12,080 ր., 3) ճաշարան—4000 ր., 4) չքաւորներին—2000 ր., գրադարան—1580 ր., 5) չքաւոր գրագէտներ—628 ր., 6) գրքերի հրատարակութեան—570 ր., 7) նպաստներ—500 ր., ուրեմն մօտ 26,500 ր. կուլտուրական և բարեգործական նպատակների համար, իսկ մնացորդը—7000 րուբլի—ռոճիկներ, դիւանական, լոյս, վառելիք, ջուր, 5% գումարներից և այլն։ Այդ ոչ կուլտուրական և ոչ բարեգործական ծախսերը բաւական ծանր բեռն են դառնում ընդհանուր բիւջէտի վրա։ Բայց 26,500 ր. գումարից ևս 12,000 ր. գնում է դպրոցների և 1580 ր. գրադարանի [illegible] վրա։ Եւ ահա այդ մօտ 28,100 ր. գումարի գործադրութիւնը մենք համարում ենք դեկօրատիվ և անարդիւնաւոր։

Մեր խորին համոզմունքով՝ հարիւրաւոր անգամ աւելի արդիւնաւէտ կը լինի հիմնել երկու ստորին գիւղատնտեսական դպրոց և ծախսել 12,000 ր., քան այդ գումարով օժանդակել երեսուն և աւելի դպրոցների, տալով 100—300 ր. ամեն մէկին և մացընելով անկազմակերպութիւն, երկիշխանութիւն ու խառնաշփոթութիւն մեր գիւղական ծխական դպրոցների մէջ։ Եկեղեցական վարչութիւնը մի կողմից է իրաւունքներ բանեցնում այդ դպրոցների վրա, իսկ Կ. Հ. Բարեգ. Ընկերութիւնը միւս կողմից։ Եւ այդ դպրոցներին մօտիկից ծանօթ անձինք վկայում են, թէ այդ ձևով ծախսված 12,000 ր. միանգամայն ապարդիւն կերպով ծախսված է լինում։ Նոյնը գրադարանի մասին. 1580 ր. ծախսվում է, սակայն գրադարանը յաճախող շատ քիչ մարդ կայ։ Բայց ահա այնպիսի մի կարևոր գործի համար, որպիսին է գիւղացիներին ընտիր սերմացու բաժանելը, ժողովրդական դեղատներ հիմնելը, որոշված է տալ միայն 200 ր., մինչ գիւղացուն լաւ սերմացու տալու համար ծախսված մի աւելորդ 100 կամ 200 ր. կարող է տասնեակ հազարների օգուտ տալ և տասնեակ հազարաւոր գիւղացիների փրկել։

Մեր առաջարկութիւնն է ուրեմն՝ հեռու մնալ մակերևութային, դեկօրատիվ գործունէութիւնից, զբաղվել բեղմնաւոր գործունէութեամբ, փոխանակ բազմաթիւ ծխական դպրոցների նպաստներ տալու՝ հիմնել սեփական երկու կամ երեք ստորին գիւղատնտեսական դպրոցներ, և, փակելով գրադարանի ընթերցարանական մասը, որ չունի յաճախողներ, պահել միայն մատենադարանը։ Հ. Ա.

ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԳԱՒԱՌԻՑ

—

Գանձակ, 26 դեկտեմբերի

Տեղիս յաջորդի պաշտօնի համար պատուիրակները միաձայն ընտրելով Գարեգին վարդապետին՝ հաւատացած էին, որ այս աջող ընտրութիւնը վերջնական կը լինի և ընտրվածը յարմարութիւն կունենայ ստանձնելու յաջորդի պաշտօնը։

Բայց «Մշակի» № 285-ում կարդում ենք, որ Գարեգին վարդապետը հիւանդ լինելով, իր առողջութիւնը վերականգնելու համար, մի խնդրագրով դիմել է Վեհ. կաթողիկոսին, խնդրելով իրան ազատ համարել այդ պաշտօնից, որ և յարգվել է Վեհի կողմից։

Պատուիրակներին մնում է կրկրորդ ընտրութիւնը կատարել։ Պէտք է շեշտել, որ անհրաժեշտ է՝ նախ քան ընտրութիւնը՝ ընտրելիի համաձայնութիւնը առնել, ապա ընտրութիւն կայացնել, որով միայն վերջ կը դրվի յաջորդական ընտրութեան խնդրին, որ երկու տարի է, ինչ ձգձգվում է։

Ներկայումս Գանձակն առանձնապէս կարիք ունի ձեռնհաս և շրջապատին չենթարկվող մի յաջորդի, որպէսզի եկեղեցական ու դպրոցական գործերը մտնեն իրանց նորմալ վիճակի մէջ։

Երկու տարի յաջորդի բացակայութեան պատճառով երեսի վրա ձգված խնդիրների մէջ աչքի ընկնող տեղ են բռնում և Ջարեքայ և ս. Թարգմանչաց վանքերի հարցերը, որոնց վերջնական լուծում տալու համար տեղս է եկել Վրաստանի և Իմերէթի թեմի կոնսիստորիայի նախանդամ Եփրեմ վարդ., որ քաղաքումս մի քանի գործեր կարգի բերելուց յետոյ ամսիս 21-ին մեկնեց նախ Ջարեքայ և ապա ս. Թարգմանչաց վանքերը։

Մեր շրջանում գտնվող վանքերի մէջ ամենահարուստը կարելի է համարել Ջարեքայ վանքը, որ ունի 3000 դես. անտառ, ձմերանոցներ, քիչ քանակութեամբ վարելահողեր։ Նախ քան ներկայ կառավարիչ Լևոն Տէր-Աւետիքեանը, Ջարեքայ վանքը, Աստուածատուր վարդապետի եղերական մահից յետոյ, ունեցաւ մի քանի կառավարիչներ, որոնք աւելի շուտ իրանց գրպանին ծառայեցին և մերկացրին վանքի պատերն անգամ ու քաշվեցին ասպարէզից։

Ներկայ կառավարչի օրով, ինչպէս ցոյց են տուել Եփրեմ վարդապետի քննութիւնները, վանքի կալուածները գտնվում են լաւ պայմաններում։

Ս. Թարգմանչաց վանքը գտնվում է Խաչակապ գիւղի մօտ, վանահայրն է Թէոդորոս վարդ. Շիրակունին։ Վանքը ունի 92 դես. գետին, որից 15 դես. վարելահողեր են, իսկ մնացածը անտառ։ Վանքը, իր շարժական իրերով և կալուածքներով, գտնվել է բարեկարգ դրութեան մէջ։ Սարգօ

—

Վաղարշապատ, 19 դեկտեմբերի

Հանգուցեալ տ. Կ. Նազիրեանը, ինչպէս յայտնի է, իր կարողութիւնը կտակել է զանազան բարեգ. հաստատութիւնների, Ներսիսեան դպրոցին, Ուրմիայի հայերին և կարողութեան 10%-ը Էջմիածնի վանքին, որպէսզի մի դպրոց շինվի Հայրիկի անունով։ Արդ՝ նպատակայարմար կը լինէր, որ կտակակատարները հանգուցեալի կտակի վերջին կէտը իրականացնէին Վաղարշապատի ս. Շողակաթ եկեղեցու թաղում, որը դպրոցի համար ունի յարմարութիւններ, մանաւանդ որ վերոյիշեալ եկեղեցին և հողը տուել է հանգուցեալ կաթողիկոսը այդ թաղամասի ժողովրդին [illegible] համար և այդ թաղի չքաւոր դասն էլ կարիք է զգում դպրոցական շինութեան։

Վ. Ք. Աղազադեան

—

Գիրք (Բագուի նահ.), 24 դեկտ.

Գեօգչայի գաւառում գտնված ծխական դպրոցների մէջ ամենաաչքի ընկնողը մեր գիւղինն է։ Այս դպրոցը մօտ 35 տարվայ կեանք ունի։ Անցեալներում յիշեալ դպրոցը ընդմիջումներով՝ երբեմն կանոնաւոր, երբեմն էլ անկանոն, մի ուսուցչով կառավարվել է մինչև դպրոցների փակվելը, կալուածները վերադարձվելուց յետոյ, չը նայած որ դպրոցը տարեկան 400 ր. ապահովված էր հանգուցեալ Թաչէոսեանի կտակով, բայց մի խումբ մարդկանց շնորհիւ ամբողջ երեք տարի միայն անունով գոյութիւն ունէր մեր ուսումնարանը, որովհետև ուսուցչի պաշտօնը յանձնվում էր այնպիսի պատահական մարդկանց, որոնք ուսուցչի անուան տակ ապրում էին միայն իրանց մասնաւոր գործերը կառավարելու նպատակով, իսկ դպրոցը մատնում անուշադրութեան։

Այս վերջին երկու տարվայ ընթացքում գիւղում գտնված գիտակից անձնաւորութիւնների շնորհիւ և Բագւում աշխատող գիրքեցիների շրջանում կազմված ընկերութեան աջակցութեամբ՝ գիւղիս դպրոցի վիճակը բաւականին բարւոքվել է։

Հոգաբարձութիւնը, անցեալ տարվանից նկատելով որ մի ուսուցիչ անկարող է լինում դպրոցի երկու պատրաստականը—70 աշակերտներով—կառավարել, որոշել էր նոր ուսումնական տարում հրաւիրել երկու ուսուցիչ՝ աւելացնելով մի պատրաստական ևս։ Այս տարի արդէն դպրոցը ունի երեք պատրաստական, երկու ուսուցիչ և 85 երկսեռ աշակերտներ։ Տեղացի հարուստ Բարհանեանը, որ յայտնի է գիրքեցիներին իր շինած հոյակապ եկեղեցով, ապագայում գիւղի դպրոցը երկդասեանի վերածելու համար արդէն ձեռնարկել է շինելու դպրոցի շինութիւնը, որի աւարտումից յետոյ՝ դպրոցը որոշ դրամագլխով կապահովեցնի յիշեալ պարոնի կողմից։ Յ. Շ.

ԽՆՁՈՐԵՍԿԻ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆԻՑ

I

Իւրաքանչիւր գաւառ ունենում է գիւղ, որի հասարակութիւնը արտայայտվում է իր ինքնատիպ, իր եզակի համոզումներով, ուր ժողովրդական մասսաները տասնեակ տարիներ շարունակ ունենում են ցաւեր, պակասութիւններ, որոնց արմատահան անելու միջոց ու հնար չը կայ։

Խնձորեսկը Կովկասի ամենամեծ գիւղն է (մօտ 1200 տ.), մեծ իր բնակչութեամբ։ Սակայն անչափ դառն և մորմոքիչ դրութեան մէջ է իր տգիտութեամբ, որ ոչ միայն իրան, այլ և ամբողջ Զանգեզուրին անգամ պատիւ չէ բերում։

Խնձորեսկը զուրկ է որևէ ընկերութիւնից, գրադարան-ընթերց. չունի, չունի բժիշկ, դեղատուն, չունի մաքուր եկեղեցի (ունեցած երկուսն էլ բանի նման չէ) և չունի վերջապէս դէպի իր շրջակայքը տանող կանոնաւոր ճանապարհներ։

Երիտասարդները ցրված են Բագւում և Անդրկասպեան երկրի քաղաքներում, դառն աշխատանքով իրանց օրվայ պարէնն են վաստակում, միայն թէ հեռու լինեն աւերակի տպաւորութիւն թողնող գիւղից, հեռու՝ տանուտէրների, դատաւորների ըստ իրանց հերթին աւերած Խնձորեսկից, ուր նրանց խորհուրդները անթափանց, նրանց խօսքը օդում կախված են մնում։

Եւ ապրում է գիւղը առանց իր գրի սևն ու սպիտակը ճանաչող երիտասարդների, որոնց բոլոր բարի ձեռնարկութիւնների տակ գիւղացիք միշտ էլ յետին և իրանց յատուկ կասկածներ են որոնում։

Սակայն Խնձորեսկն ունի հասարակութեան ծախքով կառուցված մի դպրոց։ Ամենասուղ պայմաններում գումարվել է 18,000 ր. մի խոշոր գումար և կառուցվել 12 սենեակից բաղկացած այդ հոյակապ շինութիւնը, որ միակն է գրեթէ գաւառիս դպրոցական շէնքերի մէջ։ Այդտեղ տեղաւորված էր նախկին պետական և ներկայումս էլ տեղաւորված ծխական դպրոցը։

II

Ինչպէս են խնձորեսկցիք օգտվում իրանց դպրոցից՝ թերևս անհաւատալի թւայ շատերին։

Հոգաբարձութիւնը հրաւիրել է ուսուցչական կազմ 2 ուսուցչից և 2 ուսուցչուհուց բաղկացած։ Ուսումնական տարվայ սկզբում 4 դասատուներին քիչ էինք համարում, որովհետև գիւղում 400-ից աւելի սովորող երեխաներ կան։ Սակայն անցնում է 3 ամիս, և մենք տեսնում ենք դպրոցում ուսուցչական կազմն անչափ դժուարին և վատ պայմանների մէջ. ծնողները երեխայ չեն ուղարկում դպրոց։

Ի՞նչ է պատճառը. ընտրված հոգաբարձուներն ունեն մի շարք թշնամիներ, որոնք իրանց թոյնը նրանց խնամքին յանձնված դպրոցի վրա են թափում. գլուխ են բարձրացրել, թէ ուշ են դասերը սկսել, ուսուցիչները բան չեն սովորեցնում, հոգաբարձուները քանդեցին, կերան դպրոցը... (այն դպրոցը, որի կասսայում կոպէկ չը կայ) և այլն... Եւ ահա ճահիճը շարժվեց և միջակները ելան հանդէս. ստորագրութիւն են հաւաքում ծխական դպրոցը պետականի վերածելու։

Մի հարցնող լինի. յարգելի պարոններ, դուք չունէ՞ք արդեօք պետական դպրոց. ինչ առասպելական յիշողութիւններ էք մինչև այժմ պատմում. այդ ինչ դիմակ է. ո՞ւր են ձեր բամբասանքները։ Ասում էք, վերածենք պետականի, այո. և դուք կարծում էք, որ ձեր պատուաւոր պահանջներին որևէ դպրոց բաւարարութիւն կը տայ. կասեմ, որ ոչ. որովհետև ասված է թէ՝ «սևին սապօնն ինչ անի, խևին խրատն ինչ անի»։

Թուցէ կունենաք և ժամանակով ձեր ցանկացած դպրոցը, բայց և ի վերջոյ կը զղջաք թերևս, ձեր փոքրութեան վրա արհամարհական ակնարկ կը ձգէք և կասէք, որ անձնականի համար հասարակականը մոռանալու, զոհելու չէիք. այն ժամանակ ո՞ւշ կը լինի արդէն։

Սազանդարեան

ԲԵՍԱՐԱԲԻԱՅԻ ԹԵՄԻ ԳՈՐԾԵՐԻ ԱՌԻԹՈՎ

—

Մեզ անդադար գրութիւններ և բողոքներ են հասնում, որոնք շատ մռայլ գոյներով են նկարագրում Բեսարաբիայի թեմի ազգային և եկեղեցական գործերի դրութիւնը։ Վերջերս առաջնորդի և կոնսիստորիայի նախանդամ Լևոն վարդապետի միջև անհամաձայնութիւններ ծագած լինելով, առաջնորդը արձակել է Լևոն վարդապետին իր պաշտօնից։

Մենք դժուարանում էինք տպել գործերի անմխիթար դրութիւնը և զեղծումները մերկացնող գրութիւնները, սակայն որովհետև այժմ այդ հարցը սկսել է արծարծվել և Բեսարաբիայի ռուսաց մամուլի էջերում, մենք հարկ ենք համարում խօսել այդ մասին։

Երկու երեք տարի առաջ Էջմիածնի սինօդը քննիչ է ուղարկում Բեսարաբիայի կոնսիստորիայի գործերը քննելու։ Քննութեան արդիւնքը չը հրատարակվեց, սակայն կոնսիստորիայի ատենապետ Կարապետ Աղանջանեանը արձակվեց իր պաշտօնից, որ վարում էր 22 տարիներից ի վեր, որովհետև քննիչ Յուսիկ վարդապետը երևան էր հանել մի շարք զեղծումներ, որոնց հեղինակ համարվել էր կոնսիստորիայի քարտուղարը։ Ինքը քարտուղարն այն ժամանակ ոչինչ չէր առարկել և վճարել էր պակասած դրամները։ Սակայն քարտուղարն այժմ հարց է յարուցել, որ իբր դրամական զեղծումների հեղինակն ինքը չէ եղել, այլ ինքը միայն զոհ է, որ քաւում է ուրիշների մեղքը։ Մենք, ի հարկէ, չենք կարող ասել, թէ որքան ճշմարիտ է քարտուղարի այդ յայտարարութիւնը, ուստի առայժմ բաւականանում ենք առաջ բերելով նրա բաց նամակը՝ ուղղված Քիշինևի հայոց կոնսիստորիային։ Այդ նամակը տպված է «Другъ» թերթի մէջ։ Մենք այս միայն կարող ենք ասել, որ կոնսիստորիան իրաւունք չունի գանգատները պահել և չուղարկել, իսկ սինօդի և Վեհ. կաթողիկոսի ուշադրութիւնն ենք հրաւիրում այն հանգամանքի վրա, որ ժամանակ է ուշադրութիւն դարձնել Բեսարաբիայի պէս մի կարևոր թեմի վրա և տնօրինել նոր առաջնորդի ընտրութիւն կատարել կամ մի քննիչ յանձնաժողով ուղարկել ընդհանուր ռեվիզիա կատարելու համար։

Ահա այդ բաց-նամակը, որ թւագրված է դեկտեմբերի 3-ից։

«Որպէս յիշում են ընթերցողները, երեք տարի առաջ, շնորհիւ յանկարծակի կատարված քննութեան, Քիշինևի հայոց կոնսիստորիայում երևան հանվեց թեմական գումարների վատնումն։

«Հոգևոր բարձր իշխանութեան ցոյց տուած կողմնապահութեան պատճառով դէպի տխուր դէպքի իսկական մեղաւորները, ամեն միջոցներ ձեռք առնվեցին, որպէսզի օրինական պատասխանատուութիւնից ազատեն կոնսիստորիայում բոլոր տեղի ունեցածի համար՝ նրա նախագահին, և ամբողջ մեղքը միմիայն ինձ վրա գցվեց։ Ես, առանց դատաստանի և առանց որևէ բացատրութիւնների իմ դէմ արձակված մեղադրանքների առիթով, սինօդի անողորմ վճռով արձակվեցի իմ պաշտօնից, անարգար կերպով դուրս շպրտվեցի, դառնալով այդպիսով քաւութեան նոխազ ուրիշների մեղքերի համար։

«Երեք երկար, տանջալի տարիների ընթացքում ես պարբերաբար դիմում էի Էջմիածնի սինօդին բողոքներով, պատճառաբանված և վաւերացված անվիճելի փաստերով, որոնք վկայում էին, որ ես անմասն եմ կոնսիստորիայում տեղի ունեցած այն յափշտակութիւններին, որ սինօդի քննիչը, անձնապէս թշնամի լինելով ինձ, վերագրում է ինձ։

«Ի զուր էի ես փորձ անում, ժամանակ առ ժամանակ, անմեղութեան և անմեղսակցութեան դիմակը հանելու՝ երևան հանված զեղծումների իսկական հեղինակներից։ Այնուամենայնիւ յոյսս չը կորցնելով, որ կը մերկացնեմ իսկական մեղաւորներին և ինտրիգաւորներին, և հաւատալով, որ արդարութիւնը վերջ ի վերջոյ յաղթանակը կը տանի, ես համբերութեամբ սպասում էի կաթողիկոսի գալստեան։

«Ի նկատի ունենալով Նորին Վեհափառութեան նորերս արած շրջաբերական կարգադրութիւնը, որի հիման վրա խնդրատուները և գանգատաւորները այսուհետև պէտք է դիմեն Կաթողիկոսին խնդրատուների բնակութեան տեղի մերձաւոր հոգևոր իշխանութեան միջոցով, ես վերոյիշեալ դոկումենտները ձեռքիս՝ այս օրերս դիմեցի Քիշինևի հայոց կոնսիստորիային, մատնացոյց անելով վերջին տասնամեակի վիթխարի յափշտակութիւնների իսկական հեղինակների վրա, որոնք այնքան աջողութեամբ իր ժամանակ խուսափեցին հատուցումից և այժմ,—շնորհիւ երկու-երեք ոչ-տեղական պնակալէզների, իրանց կեղծաւոր կուսակիցների, խղճի անման ժոնգլէրների, որոնք չարակամութեամբ քնեցնում են հասարակական կարծիքը և խիղճը,—շարունակում են դեռ բարեկեցիկ և ախորժելի ինքնախաբէութեան մէջ մնալ։

«Այժմ ինձ համար անսպասելի կերպով ես իմանում եմ, որ իսկական կոնսիստորիական վըէժմէնչչիկները, հակառակ Ռուսական կայսրութեան անսասան օրէնքների, հակառակ խղճի, պարտաւորութեան և երդման, շարունակելով յանցաւոր պաշտպանութիւն և անբարոյական աջակցութիւն ցոյց տալ յանցաւորներին, հրաժարվում են իմ երեք բողոք մերկացումները բարձր ինստանցիային՝ ազգի և եկեղեցու ծայրագոյն գլխի հայեցողութեանը և անաչառ դատաստանին հասցնել։

«Նոյնպէս տեղական հայ հասարակութեան մէջ յամառութեամբ լուրեր են պտտում այն մասին, որ Լևոն վարդապետին կոնսիստորիայի անդամի պաշտօնից հեռացնելը սերտ կապ ունի իմ այժմ ներկայացրած երեք բողոքների և կոնսիստորիայի անդամների մէջ թագաւորող երկպառակութիւնների, ինտրիգների և խայտառակութիւնների հետ։

«Որովհետև հայրապետական շրջաբերական կարգադրութիւնը խլում է ինձանից հնարաւորութիւնը՝ անմիջապէս ներկայացնելու Նորին Վեհափառութեան բարեհայեցողութեանը իմ տրամադրութեան ներքոյ գտնվող բոլոր իրական ապացոյցները իմ անմեղութեան և անմեղսակցութեան կոնսիստորական ամբողջ կատաստրոֆայում, ուստի ես յոյս ունիմ, որ կոնսիստորական ներկայ կազմը, չարիքը և զեղծումները դիտմամբ ծածկելով՝ իր ակներև-պարզօրէն գործողութիւններով, ինձ յուսահատութեան չի հասցնի և չի ստիպի դիմելու բարձրագոյն արքունական դատաստանին, որի առաջ ամենքը հաւասար են»։

ԳԾԵՐ, ՆԵՐԿԵՐ

I

«Փիւզանդիոն» շաբաթաթերթի № 43-ում կարդացի պրօֆէսոր Աւ. Սարուխանեանի «Բուսական աշխարհից» յօդուածը։

Աւագ Սարուխանեանը գրում է. «Բուսն

տարուց աւելի է, որ զբաղված եմ այդ առարկայով, այժմ կազմում եմ բուսական բառարան հայերէն, ռուսերէն, լատիներէն և Թուրքերէն Թարգմանութիւններով»։

Այդպիսի մի հազւագիւտ աշխատանք կարելի է միայն սիրել, ողջունել։

Նոյն յօդուածի մէջ կարդացի մի շարք բոյսերի հայերէն անուններ և, հաւատացնում եմ, համարեա բոլորն էլ պատահում եմ առաջին անգամ։

Եւ որտեղից կարող էի իմանալ, քանի որ ոչ դպրոցում, ոչ հայ դասագրքերում և ոչ հայ գրականութեան մէջ չեմ պատահել։ Բայց, գիտէք, տասը տարի յաճախել եմ հայ դպրոց, 15 տարի ուսուցել եմ և ամեն անգամ, երբ պատահում էր մի ծառ կամ բոյս Թարգմանել հայերէն, ասում էի, որ հայերէն չը կայ այդ անունը, հաւատացած լինելով որ նոյնիսկ այդ բոյսերը գոյութիւն չունեն Կովկասում։

Իսկապէս մի զաւեշտ էր դուրս գալիս. ուսուցիչ լինելով՝ լինել այնքան տգէտ տեղական բնութեան ուսումնասիրութեան մէջ, որ ենթադրել, Թէ տեղական բոյսերը բուսնում են Աֆրիկայում կամ Աւստրալիայում։

Բայց, ասացէք՝ ո՞վ մեզանից,—Թող լինի ուսուցիչ, Թէկուզ հայ գիտնական,—տգէտ չէ և չը գիտէ՝ իր բնակարանը քանի սենեակ, քանի դուռ, քանի պատուհան ունի։

Դրանք փոքրիկ, չնչին բաներ են, ինչպէս կարելի է մեր ուշադրութիւնը զբաղեցնել այդ տեսակ անպէտք բաներով։

Եւ այսօր, երբ յայտնվում է մի մարդ, որ տասնեակ տարիներ ջանք Թափելով լոյս աշխարհ է հանում մեզ անյայտ բնութիւնը, կարելի է միայն ողջունել, սիրել, խրախուսել այդ աշխատութիւնը։

Նամանաւանդ կը լինի նրանից շնորհակալ հայ ուսուցիչը, հայ դպրոցը։

Միմիայն կը ցանկանայի—բառարանը անպատճառ լինէր պատկերազարդված։

II

Շնորհակալ կը լինի հայ վարժապետը։

Բայց կան վարժապետներ, որ ունենում են և իրանց բաղդը, գուցէ և իրանց սիրած, փայփայած դպրոցը։

Երբ մարդ տասնեակ տարիներ աշխատում է մի հիմնարկութեան և վերջ ի վերջոյ նա հասնում է այն վիճակին, որ կարօտ է օրական պարէնի և նոյն իսկ կորցնում է աշխատելու ընդունակութիւնը՝—նա կանիծի այդ հիմնարկութիւնը։

Այդպէս, համոզված եմ, անիծում է ուսուցիչ Բունիաթեանը։

Առանց սոսկումի չէ կարելի կարդալ «Մշակի» վերջին համարներում այդ Թշուառ վարժապետի մարտիրոսագրութիւնը։

Ուսուցիչ Բունիաթեանը 30 տարիներ ուսուցչութիւն է արել քաղաքներում, գիւղերում և կորցրել է իր լսողութիւնը, այժմ օգնութեան ձեռք է կարկառում։

Սա գիտէք ինչ է։

Բողոք։

Հարիւրաւոր հեռագիրներ, տասնեակ ուղերձներ և քաղցր, շողոքորթող խօսքեր, որոնցով տարափեց այս օրերս հայ ժողովուրդը Ալ. Քալանթարին։

Եւ այդ շլացնող փօնի ետևից ուրուականի նման հետևում է մեր ինքնագիտակցութիւնը սովատանջ, անտէր, անօգնական Բունիաթեանի ստուերին։

Ի՞նչ անել. չը գնահատե՞լ մեր տաղանդներին, մեր հասարակական գործիչներին՝ կասէք։

Բա՛ւ լիցի։

Գնահատել, իսկապէս գնահատել, խրախուսել միշտ. նրանց մէջ է մի ժողովրդի բարոյական ոյժը։

Բայց և չը մոռանալ և այն սև մշակներին, որոնց շալակների վրայով են գնում այն ծանր սալաքարերը, որոնցով կառուցվում է մեր կուլտուրական առաջադիմութեան գործը և որոնց ծանրութեան տակը տասնեակ տարիների ընթացքում քարանում են, կորցնում են իրանց տեսողութիւնը և, անիծելով իրանց բաղդը, գերեզման իջնում։

III

Հայ վարժապետը միշտ եղել է քաւութեան նոխազ, իշի նահատակ, աւելի ճիշդ է ասել՝ նա եղել այն հայ Макаръ-ը, որի գլխին կարկուտի նման միշտ Թափվել են հարուածներ, ինչպէս ռուսներն են ասում՝ «Всѣ шишки валятся на бѣднаго Макара».

Եւ դուք մի սաղ տեղ չէք գտնի խեղճ հայ Մակարի գլխին, որ վիրաւորված չը լինի, այն Մակարի գլխին, որը եգիպտական բուրգերը կառուցանող բանւորների նման ճխլվել-փշրվել է իր ոյժերից վեր սալաքարերի տակ։

Բա՛ւ լիցի, ես չեմ ուզում ասել, որ հայ ուսուցչական արտում որոմն չէ աճում. որոմն կայ ամեն տեղ, կը լինի և հայ ուսուցչական ընտանիքում. բայց հայ ուսուցչութիւնը միշտ կանգնած է եղել իր բարձրութեան, կոչման վրա, Թէև նրա վերջը եղել է միշտ այն լսողութիւնը կորցրած Բունիաթեանի վերջը, որը, երեսուն երկար տարիներ նուիրվելով հայ մանկանը այսօր իր ալեոր գլուխը նոյն իսկ դնելու տեղ չունի։

Եւ այսօր, եթէ իրանց փառաւոր կաբինետներում նստած, շպարված կեանքի սքանչելի պաճուճանքների և յարմարութիւնների մէջ, Թանգագին կաղնեայ գրասեղանի առաջ, նզովք են կարդում հայ վարժապետի գլխին, որ նա երկու-երեք հարիւր մանէթանոց պատառը բերանը առած չէ գընում գիւղ կամ փախչում է գիւղական խոնաւ գոմերում Թաղելու և իր երիտասարդ կեանքը և առողջութիւնը,—մեր կուլտուրական խեղճութեան սրտացաւները մեղադրում են նրանց գաղափարազուրկ լինելուց, նոյն իսկ բարոյական այլանդակութիւն տեսնելով նրանց մէջ։

Բայց մտե՞լ են մի բոպէ այդ փախչող վարժապետների կաշու մէջ և զգացե՞լ են, Թէ ինչ հրէշաւոր պայմանների մէջ են ստիպված ապրել և այն էլ զուրկ նոյն իսկ նիւթական,—Թողնենք, որ բարոյականը բոլորովին չը կայ,—վարձատրութիւնից։

Ես կարծում եմ՝ կը զգային, որ դրանք հերոսներ են և իսկական նահատակներ։

Ի հարկէ Մակարը խեղճ է, և ինչու մի քանի աւելորդ шишка-ներ չը ճզմացնել նրա գլխին։

Այս մտքերը, զգացմունքները ինձ յուզեցին, տեսնելով վերջին ժամանակս մի քանի յարձակումները մեր ինտելիգենցիայի, նամանաւանդ հայ ուսուցչի վրա։ Միւս կողմից լսում եմ գեղեցիկ խոստումներ, որ ժամանակին կը բարելաւվի ուսուցչի վիճակը։

Բայց ես չեմ կարող հաշտվել այս մտքի հետ, որ այն հայեացքը և անտարբերութիւնը, որ տիրում է հայ ուսուցչի նիւթական վիճակի վերաբերմամբ, երբեք էլ նըրան բաղդը ժպտալու չէ։

Ժպտալու չէ հետևապէս և դպրոցին. դըպրոցը ուսուցչով է դպրոց։

Դպրոց բանալը մեզանում այժմ մի սպօրտ է դարձել. ով շատ դպրոցներ բանայ, նա և շատ կը փառաբանվի, Թէկուզ Թղթի վրա դրանք մի մի հատ գոմեր, մեդրեսէներ լինեն, իրանց վատ, դալկացած և եռանդասպառ ուսուցիչներով։

Խօմ կասեն, որ այս-ինչ ընկերութիւնը ունի մի քանի տասնեակ դպրոցներ։

Բայց գիտէք, եթէ քառասուն դպրոցի տեղ բացվէր միմիայն չորս հատ և իսկական դպրոցներ, դրանք քառասուն անգամ աւելի օգտաւէտ կը լինեն և կը լինէին մի մի կուլտուրական օջախներ և դրանց միջով ներս կը Թափէր խորը գիտութիւն, իսկական գիտութիւն և ոչ մի «Լուսաբեր», մի «Դասընկեր»։

Փառք Աստուծոյ, հայ ուսուցիչները սկսել են խելօքանալ և հասկանալ, որտեղ է Թաղված շան գլուխը, և հիմա ալաթ-դասրաթ, բահերը, բրիչները առած, հէ ի հէ փորում, փորփրում են շան գլուխը հանելու համար։

Խոստումներ։

Որքան շատ է լսել հայ վարժապետը այդ քաղցրահնչիւն երգերը, ինչպէս դաշնամուրի ակկորդները, ամառային պալատի մէջ կոլոլված անկալոշ հայ վարժապետը ձմեռվայ սառնամանիքին մի հարուստ մեծատան հսկայ տան պատուհանի առաջ։

Соловья баснями не кормятъ—կասեն հայ վարժապետները։

Ուրիշ բան էլ կասեն՝

Дайте намъ синицу въ руки, не сулите въ небесахъ журавля.

Յակովբ Գենջեան

ՀԱՅ ՈՒՍՈՒՑԻՉԸ ԳԱՒԱՌՈՒՄ

Երեք տարուց ի վեր Նաւթարդիւնաբերական «Արամազդ» ընկերութիւնը և Կուլտուրական Միութիւնը հայկական յետ ընկած չքաւոր գիւղերի Թւում Ղափանի շրջանում ես բացել են բաւականաչափ դպրոցներ՝ 2—400-ական ռ. նպաստներով։

Այդ ընկերութիւնները իրանց վերապահելով յիշեալ դպրոցների համար ուսուցիչներ վարձելու և նրանցում կօնտրոլի դեր կատարելու իրաւունքը, օգոստոսի սկիզբներին և սեպտ. վերջերին մեծ խոստումներով վարձում են ուսուցիչներ, որոնք հազիւ մի շաբաթվայ ճանապարհորդութիւնից յետոյ մեծ դժուարութիւններով հասնում են գիւղերը։ Ըստ պայմանագրութեան՝ ուսուցիչը պիտի ստանայ սենեակ, ծառայ, վառելիք և լուսաւորութիւն. սպասում է, որ միւս օրը փոխադրվի իր բնակարանը։ Սակայն ի զուր։ Անցնում են օրեր, և գիւղում ուսուցչով հետաքրքրվող, նրան տրվելիք յարմարութիւնների մասին մտածող չը կայ։ 8—9 օրից յետոյ միայն, երբ ուսուցչի ջանին հասնում է ու բարկացած յանդիմանում գիւղացոց, յատկացվում է մի խարխուլ բնակարան՝ սովորաբար 5—6 տարուց ի վեր բնակվողներից զուրկ ու մնացած դարձած։ Անցեալ տարի Ղափանի շրջանի ուսուցիչներից մէկին տրվել է մի պատը փլված ու կարպետներով ծածկված խրճիթ, և ուսուցիչը անց է կացրել նրանում ձմեռը, վաստակելով ծանր հիւանդութիւն։

— Վարժապետ, դէ խեղճ ժողովուրդ ընք. ըլըշ չը կայ. օրիշ տեարտակ օթախ չօնինք, հիմը տիւս անինք, օթախը քեզ տանք։

Ստիպված՝ ուսուցիչը հաւաքվում է այդ խոնաւ ու խարխուլ բնակարանը, աւելի շուտ՝ Թալան բաց պատուհաններով, յաճախ միայն երթիկով։ Ուսուցիչը ծառայ է պահանջում, հոգաբարձուներն ու մի երկու «աղսախկալ» գալիս են խնդրում.

— Վարժապետ ջան, քեզ այսան ա, վեր վարի, կռիծի ժամանակ ա, չաշմիշ ըլած ընք, բիզի խօլա տանես. վար ա, պէն ա պրծնինք, կը տանք։

Լուսաւորութիւնը նոյնպէս խնդրում են, որ զիջի, աղաչում են, որ «քեասիբ են», չեն կարող փող տալ։

Ուսուցիչը, անճարացած, իր առողջութեան քայքայման գնով՝ տանում է մի կերպ այդ բոլորը, հաշտվում իր անտանելի կացութեան հետ, ընտելանում իրան վիճակված Թալային, ու չոր հացով, վերին աստիճանի աննախանձելի սննդառութեամբ պատրաստվում է սկսել դպրոցական պարապմունքները։

Գիւղական անգրագէտ հոգաբարձուների առաջնորդութեամբ մտնում է մի՝ իր սենեակի նման խարխուլ, մութ ու խոնաւ «ղարադամ», որի մի անկիւնում դարսված են 4—5 հատ կոպիտ նստարաններ. դա է ուսումնարանը. այդտեղ պիտի ամբողջ տարին օրական 6—7 ժամ պարապելով մաշի Թէ իր և Թէ 50—60 երեխաների առողջութիւնն ու կեանքը։

Ուսուցիչը բացատրում է, որ դրանում պարապել անհնարին է, երեխաների առողջութիւնը կը վնասվի, որ նստարանները շատ քիչ են աշակերտների Թւին համեմատած, հարկաւոր է մի քանիսը ևս պատրաստել։

— Էդ է, վարժապետ, դրանից աւել մեր ոյժը չի պատիլ, ոչ նոր տուն կարող ենք տալ, ոչ էլ ստօլներ շինել տալ։

Ուսուցիչը բացատրում է, որ հինը գնացել անցել է, որ հին ձևի ուսուցումը վնասակար է համարված. պէտք է նոր ձևով երեխաներին կրթել ու ուսուցանել, ամեն մի աշակերտ պիտի ունենայ նստարանի վրա ընդարձակ նստելու տեղ... Սակայն ի զուր։ Խեղճ ուսուցիչը այդպիսի պայմաններում մի կերպ սկսում է պարապմունքները, սնվելով լոկ չոր հացով և անիծելով իր կոյր բաղդն ու դէպի այդ կողմերը ճանապարհվելու օրը։ Գիւղում ոչ Թէ ուսուցչի մասին մտածող, կարիքները հոգացող չը կայ, այլ նրա վրա նայում են իբրև շահագործման աղբիւրի ու իրանց մէջ գտնված սննդի անհրաժեշտ մթերքները կրկնակի, եռակի գներով ծախում։ Եթէ դրա վրա էլ աւելացնենք ինչ-ինչ պատճառներով ռոճիկների ուշանալը, ամեն բան կը լրանայ։

Վերջերս պատահում է հետևեալ դէպքը. մեզ մօտիկ մի բաւականաչափ հարուստ գիւղի ուսուցիչների ռոճիկները ուշանում են։ Մնալով առանց կօպէկի, ուսուցիչները դիմում են գիւղի առձեռն 1000-ներ ունեցող հարուստներին և բոլորից՝ կօպէկ անգամ տալու կտրական մերժում ստանալով, առաւօտեան դասերը Թողած, ձիեր հեծած, դիմում են դէպի շրջակայ գիւղերի ուսուցիչները, վերջիններիս ունեցած կօպէկները կիսելու և մի կերպ քարշ տալու իրանց Թշուառ գոյութիւնը։ Յաճախ ուսուցիչը ձիուն ձմեռը շաբաթներով մնում է առանց վառելափայտի և ենթարկվում զանազան հիւանդութիւնների։ Անցեալ մայիսին Ղաթարի հանքերի բժիշկը զարմանալով նկատում էր, որ շրջանումս ոչ մի առողջ ուսուցիչ չէ գտել, բոլորը ցրտից ու սննդի բացակայութիւնից ենթարկված են եղել զանազան հիւանդութիւնների։

Ահա այդպիսի պայմաններումն է տանում դպրոցական պարապմունքները մեր գաւառական ուսուցիչների մեծագոյն մասը։

Սա՝ խեղճ գաւառական ուսուցիչների ողբալի դրութեան առաջին նկարագրութիւնը չէ. ամեն օր մեր Թերթերի էջերը զարդարվում են նման ցաւալի նկարագրութիւններով և բողոքներով դպրոցները ապահովող ընկերութիւնների դէմ. սակայն այդ ընկերութիւնները զարմանալի անտարբերութիւն են ցոյց տալիս այդ հարցի վերաբերմամբ։ Կարծես աչքերն ու ականջները փակած, չեն ուզում տեսնել, լսել իրականութիւնը և գէթ իրանց տուած պատկառելի նպաստների փոքր ի շատէ արդիւնաւէտ հետևանքի տեսակէտից՝ մտածում ուսուցիչների համար փոքր-ինչ տանելի կացութեան պայմաններ ստեղծել։

Սև-քար (Ղափանի շրջ.) Զ. Մ.

ԿԻԵՎՈՒՄ ՎՐԱՑ ԵՐԵԿՈՅԹԻ ԱՌԻԹՈՎ

Խարկով, 18 դեկտեմբերի

Не моря раздѣляютъ людей, а невѣжество, не различіе языковъ, а враждебное отношеніе.

Մեծ զարմանքով և կասկածով կարդացի «Մշակ» լրագրի № 270-ի մէջ այն լուրը, որ Կիեվում կովկասցի ուսանողութիւնը երկու խմբի է բաժանվել, մի կողմը՝ հայ և ռուս, միւս կողմը՝ վրացի և Թուրք ուսանողները, և որ իբր այդ երկու խմբերի միջև գժտութիւն և երկպառակութիւն են տեղի ունեցել։ Անկասկած, այդ լուրը պիտի ճնշող տպաւորութիւն գործի Կովկասի ընթերցող հասարակութեան վրա և տեղիք տայ՝ ծանօթ չը լինելով իրերի դրութեան հետ, դատապարտել հայ և ռուս ուսանողութեան։ Ինչպէս հայ ուսանող Խարկովի համալսարանի, որի համար շատ բարձր է և վեհ կովկասեան ազգերի համերաշխութեան և եղբայրակցութեան սկզբունքը և մեր ընդհանուր Կովկասի կուլտուրական զարգացման գործը, ինձ կը ներվի, եթէ, առիթից օգտվելով, երկու խօսք ասեմ և մեր ուսանողութեան մասին։ Թէ որքան է ուղիղ և անաչառ «Դրօէբա» Թերթի № 267-ի մէջ զետեղված Ի. Կատօշվիլիի Թղթակցութիւնը Կիեվի հայ և ռուս ուսանողութեան վերաբերեալ, այդ Թողնում եմ նրա պատասխանատուութեան տակ, մինչև գործի իսկական պարզվելը, իսկ այժմ պիտի ասեմ, որ դրա նման մի դէպք օրերս այստեղ կարող էր տեղի ունենալ հայ և վրացի ուսանողութեան միջև, եթէ հայ ուսանողութիւնը զիջողաբար չը վերաբերվէր ներկայ գործում։ Բանը նրա մէջ է, որ ամեն տարի՝ կովկասցի հայ և վրացի ուսանողութիւնը այն համալսարանական քաղաքներում, որտեղ նրանք աչքի ընկնող մի Թիւ են կազմում, ունենալով ամեն մէկը իրանց համերկրացիութեան ընկերութիւն, որտեղից-չքաւոր ուսանողները նպաստներ են ստանում, երեկոյթներ են կազմում այդ վերջինի օգտին։ Բայց որովհետև երեկոյթները նիւթական տեսակէտից աւելի ձեռնտու է կազմել ուսումն. տարվայ առաջի շրջանում և կովկասեան երեկոյթները՝ Թէ հայոց և Թէ վրացոց՝ համարեա միևնոյն բնաւորութիւնն են կրում, ուստի ամեն տարի երեկոյթ տալուց միշտ հարց է ծագում, Թէ ո՛ր ուսանողութիւնը պիտի դնէ առաջ իր երեկոյթը—հայ, Թէ վրացի։ Այսպիսի մի հարց օրերս քննութեան առարկայ էր մեր համերկրացիութեան ընկեր. ժողովում։ Պարզ բան է, որ ով առաջ դրեց երեկոյթը, մեծ եկամուտը նրանն է։ Առհասարակ, այսպիսի դէպքերում, նիւթական տեսակէտից, ամենալաւն այն է, որ երկու ուսանողութիւններն միանան և միասին կազմեն մի հսկայական երեկոյթ։ Մեր Խարկովի համալսարանը անցեալ տարի այդպէս էլ արեց, սակայն այս տարի, Թէ մենք և Թէ վրաց ուսանողութիւնը, զանազան նպատակներ աչքի առաջ ունենալով, կամեցանք առանձին կազմել երեկոյթը, և որովհետև համալսարանի ադմինիստրացիայից այնպիսի կարգադրութիւն կար, որ երեկոյթի մէկը կազմել մինչև յունվար, իսկ միւսը յունվարից յետոյ, ուստի վրացի ուսանողութիւնը ուղարկելով մեզ մօտ բանակցութեան իրանց ներկայացուցիչներին՝ խնդրել էր զիջել իրանց՝ առաջի երեկոյթը։ Մենք, հայ ուսանողութիւնս, որ նոյնպէս կարող էինք պնդել, Թէ մենք ենք ուզում դնել առաջի երեկոյթը, գիտակցաբար պաշտպանելով մեր դրացիների շահերը և բարձր պահելով ընկերական համերաշխութեան նշանակութիւնը, զիջեցինք նրանց երեկոյթը, խոյս տալով ամեն տեսակ Թիւրիմացութիւնից, որ կարող էր տաքացնել մեր յարաբերութիւնները։ Մենք հաւատացած ենք, որ մեր մէջ չէին կարող ծագել գժտութիւն և երկպառակութիւն։ Ուրեմն ներկայ նամակովս յայտնում եմ ի գիտութիւն Կովկասի հասարակութեան, որ մենք, կովկասցի ուսանողութիւն—ռուս, հայ, վրացի, Թուրք—բարձր ենք պահում մեր երկրի մէջ բնակվող ազգերի համերաշխութեան և եղբայրակցութեան գաղափարը։

Ուսանող Յ. Ս. Ադամեան

ԴԱՏԱՍՏԱՆԱԿԱՆ ԴԱՀԼԻՃԻՑ

Երէկ, ամսիս 29-ին, Թիֆլիսի նահանգական դատարանի քրէական բաժնում քննվեց Կովկասեան գրաքննական ատեանի յարուցած դատը «Մշակի» խմբագիր Ալ. Քալանթարի դէմ, «Մշակի» այս տարվայ № 139-ում առանց Թոյլտուութեան տպելու համար Թագաւոր Կայսրի խօսքերը՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի արտասանած ճառի մէջ։

Դատաւորներն էին Երմօլայեվ, Ալիխաշէնկօ և պատւաւոր հաշտարար-դատաւոր Կօխանօվսկի։

Վկաներ կանչված էին գրաքննական ատեանի նախագահ Կօլօբով և Հ. Առաքելեան։

Մեղադրվող Ալ. Քալանթարի և վկայ Հ. Առաքելեանի ցուցմունքներից պարզվեց, որ «Մշակի» խմբագրութիւնը ամեն հնարաւոր միջոց գործ էր դրել և ամեն զգուշութիւն ձեռք առել նախ քան տպելը։ Եւ Կաթողիկոսի պատասխան ճառը, որի մէջ փակագծերում գրված չէին և Թագաւոր Կայսրին վերագրված խօսքերը, տպվեց «Մշակի» մէջ միայն այն ժամանակ, երբ նա ամբողջովին տպվել էր Կ. Պօլսի հայ և օտար Թերթերում։ «Մշակը» միայն արտատպել էր, իր կողմից չշեշտելով այդ արտատպումը։ Դատարանը կէս ժամվայ խորհրդակցութիւնից յետոյ յայտարարեց իր վճիռը, որով Ալ. Քալանթար ճանաչվեց մեղաւոր առանց Թոյլտուութեան տպելու համար և ենթարկվեց 5 րուբլի տուգանքի։

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

◆ Մեծ Իշխան Նիկոլայ Միխայլովիչը հետևեալ շնորհակալական հեռագիրներն է ուղարկել՝ 1) Թիֆլիսի Արտիստական Ընկերութեան աւագների խորհրդի նախագահի անունով. «Անկեղծ շնորհակալ եմ Արտիստիկ Ընկերութիւնից Իմ Ծնողի մահվանը ցաւելու համար», 2) Կարս, գեներալ Պարկաւի անունով. «Կարսի ազգաբնակութեանը և ձեզ յայտնում է անկեղծ շնորհակալութիւն Մեր Ընտանիքը», 3) Նուխի՝ Եղիշէ վարդ. Ահարոնեանին. «Ձեզ, հայրսուրբ, հոգևորականութեանը և հօտին անկեղծ շնորհապարտ եմ Մեր վշտին մասնակցելու համար»։

◆ Գորիի հայոց դպրոցի հոգաբարձութիւնը դեկտ. 20-ին ուղարկել է հետևեալ հեռագիրը Մեծ Իշխան Սերգէյ Միխայլօվիչին. «Այսօր Գորիի հայոց դպրոցի հոգաբարձութիւնը, ներկայութեամբ ուսուցչական խմբի և աշակերտների, հոգեհանգիստ կատարեց, ջերմեռանդ աղօթելով Ձեր անմոռանալի Օգոստափառ Ծնողի՝ ի Տէր հանգուցեալ Մեծ Իշխան Միխայիլ Նիկօլայեվիչի հոգու հանգստեան համար»։ Ի պատասխանի ստացվեց հետևեալ հեռագիրը դեկտ. 23-ին. «Յայտնում եմ սրտագին շնորհակալութիւնս ուսուցչական խմբին և աշակերտներին՝ կատարած աղօթքների մասին իմ Թանգագին Ծնողի համար։ Սերգէյ»։

◆ Վերջին օրերս քաղաքում ծաղկով հատ-հատ հիւանդանալու դէպքեր են նկատվում։ Այդ հիւանդութեան տարածման առաջն առնելու համար քաղաքային սանիտարական-բժշկական տեսուչ Ստեփանեանը կարգադրել է քաղաքային բոլոր բուժարաններում ձրիաբար ամեն օր կտրել ցանկացողների ծաղիկը ցեր. ժ. 9—12-ը։

◆ Ստացանք Կ. Ափինեանի կազմած 1910 Թ. «Շիրակ» պատի և ծոցի օրացոյցները։ Առաջինի տախտակի վրա գունաւոր նկարներով զետեղված են հայազգի Թագաւորների պատկերները։ Ծոցի օրացոյցը ունի շատ ճոխ յաւելուած։ Ստացանք նաև Մ. Զմշկեանի 1910 Թ. տարեցոյցը, որի ճակատը զարդարված է Վեհափառ Իզմիրլեանի նկարով։ Տարեցոյցը՝ բացի հարուստ գիտելիքներից, պարունակում է նորոգ հանգուցեալ Թիֆլիսի նախկին քաղաքագլուխ Ալ. Մատինեանի, կաթողիկոսական համազգային ժողովի, Ալ. Քալանթարի, հանգուցեալ Գ. Մանթաշեանի, Գ. Բարխուդարեանի, դերասան Գ. Միրզոյեանի լուսանկարները և Էջմիածնի ու Պարիզի եկեղեցու պատկերները։

◆ Այսօր, երեկ. ժամը $6^1/_2$-ին, կայանալու է Կ. Հ. Բ. Ընկ. երկրորդ անգամ նշանակված ընդհանուր ժողովը։ Զբաղմունքի առարկաներն են՝ 1) կենտրոնի և ճիւղերի նախահաշիւների քննութիւնը և հաստատումը, 2) զեկուցումն Ա. Պօղոսեանի նուիրաբերած գումարի մասին և 3) առաջարկութիւն Ա. Պօղոսեանին ընտրել ընկերութեան պատւաւոր անդամ։ Այս ժողովը կը կայանայ որքան անդամ որ ներկայ լինի։

◆ Ստացանք Կ. Հ. Բ. Ընկերութեան 1910 Թ. նախահաշիւը։ Հաշւեկշիռն է 33,721 ռ. 85 կ.։ Խորհուրդը պակասեցրել է դպրոցական նպաստը մօտ 5000 րուբլով, դարձնելով 12,080 ռ., իսկ նպաստների չնչին 2000 ռ. նոյնն է պահել։ Սրանց դէմ դիւանական և գործավարական ծախքերը անցնում են 3000 ռ., իսկ միմիայն պատահական ծախքերը որոշված են 773 ռ. 35 կ.։

◆ Ռուս Թերթերը, յայտնի չէ ինչ աղբիւրներից քաղելով, յայտնում են, որ արձակված է պաշտօնից Ղարաբաղի Թեմի առաջնորդ Աշոտ եպ. Շախեանը։ Որքան յայտնի է, սրբազանը ինքը կամովին հրաժարվեց յատուկ խնդրագրով յանուն Վեհափառ Հայրապետի։

◆ Թիֆլիսի Նահանգապետը քաղաքագլխի և Թիֆլիսի նահանգի քաղաքային աւագների անունով ուղարկել է հետևեալ հրահանգը. «Քաղաքային կանոնադրութեան 11-րդ յօդուածի հիման վրա, նոյնպէս և ի նկատի ունենալով, որ նոյն կանոնադրութեան 140-րդ յօդուածի ոյժով քաղաքային գումարները ծախսելու ժամանակ ղեկավարվելու է այն նախահաշւով, որի մէջ առանց համապատասխան գումար մտցնելու իրաւունք չէ տրված քաղաքին և ոչ մի կօպէկ ծախսել, (140-րդ յօդուածի 1-ին կէտը), իսկ քաղաքային դումայից և քաղաքային լիազօրներից ընդունված նախահաշիւը գործադրվում է միմիայն նահանգապետի Թոյլտուութեամբ,—առաջարկում եմ պ. պ. քաղաքագլխին և քաղաքային աւագներին, մինչև սահմանված կարգով 1910 Թւի նախահաշւի հաստատումը, չանել ոչ մի ծախք առանց նահանգապետի Թոյլտուութեան քաղաքային գանձարկղից, բացի պարտաւորական և պաշտօնական ծախքերից»։

◆ Ներքին գործերի մինիստրը տեղեկացրեց Փոխարքային, որ Թոյլատրվում է բոլոր ազգաբնակութիւնների մէջ հանգանակութիւն բանալ յօգուտ պատերազմում ընկած զինւորների որբերի և ընտանիքների։

◆ Անցեալ օրը պրոֆ. Վարդանեան այցելեց Հայոց Ազգագրական Ընկերութեան մարդաբանական-կովկասագիտական Թանգարան-գրադարանը և մանրամասն ծանօթացաւ Եր. Լալայեանի պեղումների հետ։ Լսելով Լալայեանի բացատրութիւնները, յարգելի պրոֆ. մեկնելիս իր կարծիքը յայտնեց—«Կովկասի մանրակրկիտ ուսումնասիրութեան համար այս պեղումները շատ մեծ նշանակութիւն ունեն»։

◆ Թիֆլիսի գեն.-նահանգապետի կարգադրութեամբ տուգանքի են ենթարկվում՝ ամեն մինը 500-ական րուբլով՝ Թիֆլիսում հրատարակվող «Закавказье» և «Սաքարթվելօս Մօամբէ» օրաթերթերի խմբագրութիւնները։ Տուգանքի է ենթարկված նաև «Новая Рѣчь» Թերթը «Рѣчь»-ից «Սինոդի նոր նստաշրջանը և վրաց էկզարխութիւնը» յօդուածը արտատպելու համար։

◆ Շատախի գաւառի Թաղի աւանի ժողովրդական գր.-ընթերցարանի օգտին «Մըշակի» խմբագրատանը հաւաքված գրքերը, Թւով 58 կտոր, երէկ յանձնեցինք շատախեցի Մ. Գելիկեանին և Թ. Իսաջանեանին՝ համաձայն յիշեալ գր.-ընթերցարանի վարչութեան կարգադրութեան։

ՈՍՏԻԿԱՆԱԿԱՆ ՏԵՂԵԿՈՒԹԻՒՆՆԵՐ

—

◆ Դեկտեմբերի 28-ին 4-րդ ոստիկանութեան անդամները և գինուոր-պահակները շուրջկալ կատարեցին և ձերբակալեցին 10 անգործ և անանցաթուղթ մարդկանց։

◆ Դեկտեմբերի 29-ին, առաւօտեան ժամը $5^1/_2$-ին, հրացանազարկ եղաւ պօղպօրուչիկ Դիլևսին սպանող գինուոր Իվան Տօպչիևվը։

◆ Դեկտեմբերի 28-ին, երեկոյեան ժամը 8-ի մօտերը, Նիկօլայեսկի կամուրջի վրա էլեկտրաքարշի վագօնի տակն ընկաւ և աննշան ջարդուածքներ ստացաւ Ղազախի գաւառի Մելիք-քենդ գիւղացի Սերգէյ Էլչեանը, որին տարան հիւանդանոց։ Վագօնի կառավարողն էր Կրավցօվը։

◆ Դեկտեմբերի 28-ին պօստատանը 18 տարեկան գրպանահատ Աֆանասի Լուկիանօվը յափշտակեց 400 րուբլի վաճառական Իգրայիլ Կիշելգօֆից, բայց յետոյ ձերբակալվեց։

◆ Դեկտեմբերի 28-ի երեկոյեան ժամը 9-ին Գօգօլևսկայա փողոցում, № 20 տանը, Պէլագէա Անտօնօվայի բնակարանում Վլադիմիր Զուբաձէն ինքնասպանութիւն գործեց։

ԳԻՏՈՒԹ., ԳՐԱԿԱՆ., ԳԵՂԱՐ.

ԹԱՏՐՈՆ ԵՒ ԵՐԱԺՇՏՈՒԹԻՒՆ

—

Մենք տեսանք երգիչ Ղուկասեանին մի նոր մեծ դերի մէջ։

Կիրակի, դեկտեմբերի 27-ին, Ղուկասեանը հանդէս եկաւ Ֆաուստի դերում նոյնանուն օպերայում։

Ղուկասեանը թափանցել էր Ֆաուստի դերի մէջ, խաղում էր կենդանի գծերով, երգում էր ճաշակով, լաւ ձևակերպված պարբերութիւններով։

Նրա Ֆաուստը առաջին պատկերի մէջ իսկապէս գառամեալ ծերունի էր, դողդոջուն շարժումներով, անհաւասար իր քայլուածքում, մօտեցած կեանքի վերջին օրերին։ Նա իր գիրեզմանի շեմքին ցանկութիւն է յայտնում վերադարձնել երիտասարդութիւնը, որպէսզի նա ապրէ այն կեանքով, որից նա զուրկ է մնացել։ Եւ նա ստանում։ Եւ Ղուկասեանը վերածնված Ֆաուստի դերում հանդէս եկաւ իբրև նոր աւիւնով համակված մի գարնանային արարած, որ վազում է նոր կեանքի ետևից։

Ղուկասեանը երրորդ գործողութեան մէջ մեծ արիաները երգեց իմաստալից, տպաւորիչ և վերցրեց մի քանի գեղեցիկ նօտաներ, որոնք առանձին փայլ տուեին երգին։

Մարգարիտայի դերը կատարում էր Ռօստօվսկայան։ Նա երգում է մաքուր ձայնով, բայց գործում է մանկական դերակատարի բնաւորութիւն։ Ձայնը դեռ չէ ստացել ոյժ և հաստատութիւն։

Թատրօնը գրաւել էր հանդիսականների մեծ բազմութիւն, որոնց մէջ տօների պատճառով կային շատ մանուկներ։

Սիրող

Տօների պատճառով, Հայ Դրամատիկական Ընկերութեան դերասանական խումբը, ամսիս 27-ին, խաղաց Սերվանտեսի յայտնի «Դօն-Քիշօտ Լամանչեցին» Արտիստական Ընկ. Թատրօնում։

Այս անգամ մեզ համար պիէսան այնքան հետաքրքրական չէր, որքան Ալիխանեանի բեմ դուրս գալը Դօն-Քիշօտի դերում։

Մեր բեմի աշխատասէր և ընդունակ այդ ոյժը այս անգամ էլ կարողացաւ պատւով տանել նոյնիսկ իր ամպլուային անհամապատասխան այդ դերը։ Սամիկոնեանի Սանխօն բաւարար էր։ Միրզօյեանը սափրիչի դերում շատ լաւ էր։ Միւսները պահպանեցին անսամբլը։

Թատրօնը կիսով չափ դատարկ էր։

Մարտօ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿՆԵՐ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

I

Թաւրիզ 18 դեկտեմբերի

Ղարադաղի խաներին, ևս առաւել կողոպտիչ ու արիւնախում Րահիմ խանին զսպելու հոգսը Պարսկաստանի քաղաքական գործիչների լուրջ ուշադրութեան առարկան է այժմ։ Սաթթար-խանի անաջողութիւնից յետոյ Թէհրանում վճռվել էր նոր զօրագնդեր ուղարկել Ղարադաղ։ Կարգադրվել էր, որ Եփրեմն իր խմբովը գնայ։ Նա գտնվում էր Սէրաբում, և, ինչպէս հաստատ տեղեկութիւններ հասնում են, արդէն մի ընդհարում տեղի է ունեցել Րահիմ խանի որդու՝ Բէօյիւք խանի հրոսակների հետ, և վերջինս փախել է նոր ոյժեր հաւաքելու համար։ Այս վերջին օրերի լուրն է, թէ Եփրեմը պաշարել է Ահարը՝ Ղարադաղի դատաւորանիստ քաղաքը։ Թէ որչափ ճիշդ է տարածված լուրը և ինչ կը լինի կռիւների հետևանքը, կը գրեմ իր ժամանակին։

Թէհրանում մէջլիսը, երևում է որ, զբաղվում է արտաքին փոխառութեան կարևոր հարցով, որից կախված կը լինի երկրի կարգ ու կանոնը։ Ատրպատականի ձայնը, որպէս մի մեծ և կարևոր վիճակի ձայն, որոշյն կարևորութիւն է ստացել, հարցնելով առանձին կարծիք գեներալ-նահանգապետ Մուխբիր-ուս-Սալթանէին կոնտրօլ ընդունելու վերաբերութեամբ։ Անգլիացիք և ռուսները յանձն են առնում տալ ուզված գումարը այն պայմանով, որ իրանց կողմից կոնտրօլի տակ առնվի երկրի ֆինանսականը։ Այդ պատճառով Թէհրանից հարցրել էին նահանգապետի կարծիքը։ Մուխբիր-ուս-Սալթանէն պատասխանեց հեռագրով կարճ և պարզ. «Եթէ փողերը չեն մտնելու մասնաւոր մարդկանց գրպանը, ի՞նչ վնաս ունի, եթէ կոնտրօլ ընդունենք»։

Մէջլիսը նշանակեց Սաթթար խանին 250 թուման, մօտ 500 ր. ամսաթոշակ։

Պարսիկ նացիօնալիստները մեծ եռանդով առաջ են տանում ակցիօներական ընկերակցութիւնների գործը։ Ուրմիի լճի շահագործման ձեռնարկութիւնը գրել եմ «Մշակին». յայտնի է նաև այն զօրաւոր մրցումը, որ կատարվում է ռուսների և անգլիացիների կողմից՝ լճի շահագործութիւնը իրանց ձեռքը ձգելու նպատակով։ Առ այժմ ի զուր են երևում օտար կապիտալիստների ջանքերը։

Նացիօնալիստները ձեռնարկելու են հանքերի և Թաւրիզի մօտ քարածխի հանքի շահագործութեանը։ Թաւրիզի վախկոտ, բայց ագէտ ու յաւակնոտ հայ վաճառականները խուսափում են մասնակցելուց, չուզելով ձեռք քաշել իրանց պատմական սարգաջութիւնից։ Մենք կարծում ենք՝ ժամանակ է, որ հայ դրամատէրերն ու առևտրականները զարթնեն քնից և մի փոքր առաջընթաց քայլեր անեն դէպի կուլտուրական գործերը։

Ատրպատականի հայ պատգամաւորների թիւը այսպիսով լրանալիք չունի շուտով, ուր մնաց թեմական խորհրդի ընտրութիւնը... Փայլուն դիմաւորութիւն և ճանապարհել սիրող Թաւրիզեցիները սովոր են իսկոյն լքանել առաջնորդարանը և առաջնորդին անօգնական և քննադատել խիստ՝ անկիւններում։ Առաջնորդարանն ու առաջնորդը տագնապում են դրամական անձկութեան մէջ. թեմի արդիւնք չը կայ, եղածն էլ չէ գանձվում և արդէն անբաւարար է ծախսերը ծածկելու։ Այս օրերս հանգանակութիւն էին սկսել առօրեայ ծախսերի համար, և, կարծում եմ, հազիւ 240 թումանաչափ մի գումար հանգանակվեց... Առաջնորդարանը թողնել նիւթական ծանր կացութեան մէջ՝ շատ էլ հաւանալի չէ։ Վերջապէս ձեր են տանում մեզ գործերը. կորուստ թէ փրկութիւն։

Հայկազուն

II

Նոր-Ջուղա, 7 դեկտեմբերի

Անցեալները, Սպահանի կառավարութեան կողմից Նոր-Ջուղան ևս հրաւիրվեց մասնակցելու «անջումանէ բալադիէ»—մունիսիպալիտէի—ընտրութեան, այն է՝ Նոր-Ջուղայի հայերն իրանց միջից 2 հոգի ընտրելու, որպէս ներկայացուցիչ «անջումանէ-բալադիէում»։

Բագրատ վ. Վարդազարեանի հրաւէրով, ազգ. կենտրօնական դպրոցի դահլիճում տեղի ունեցաւ մի ընդհ. ժողով, Սպահանից ուղարկված Զաքէթի նախագահութեամբ։ Գաղտնի քուէով անդամներ ընտրվեցին Մայիլ Եսաեանը և միրզա-Յարութիւն Յորդանանեանը։

Առաջինը ունի անկախ դիրք և վայելում է ամբողջ Նոր-Ջուղայի համակրութիւնը, ինչպէս և Սպահանի պարսիկ վաճառականական դասակարգի յարգանքը։

Երկրորդ ընտրեալը հրաժարվեց պաշտօնից, իսկ նրա տեղ գործի գլուխ անցաւ Կարապետ Բարսեղեանը, որ երրորդ ընտրեալն էր ընդհ. ժողովի։

Ընտրվածներն սկսել են արդէն պաշտօնապէս մասնակցել «անջումանէ-բալադիէի» նիստերին։

Նոր-Ջուղայեցի

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՊԵՏԵՐ. ՀԵՌ. ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

28 դեկտեմբերի

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ։ Առևտրի մինիստրութեանը կից կազմվեց խորհրդակցութիւն հանքային ջրերի կառավարութիւնը վերակազմելու համար։

Կայսրը հրամայեց նաւատորմի ցանկից դուրս հանել անպէտք լինելու պատճառով 22 ականանաւեր։

ՄՈՍԿՎԱ։ Խօլերան թուլանում է։

ԵԱՐՕՍԼԱՎԼ։ Յանկարծամահ եղաւ Պետական Խորհրդի անդամ պարագլուխ Եակօվլևը։

ԽՕԼՄ։ Եւլօգիյ եպիսկոպոսի նախագահութեամբ բացվեց Պրիվիսլան երկրի ռուս գործիչների համագումարը։ Եկել են մօտ 100 մարդ։ Համագումարը ամենահպատակ հեռագիր ուղարկեց Կայսրին։ Ստացվել են բազմաթիւ շնորհաւորական հեռագիրներ պետութեան զանազան հայրենասիրական կազմակերպութիւններից և հասարակական գործիչներից։

ՊԵՏՐՕՎՍԿ (Դաղստանի շրջան)։ Երկրորդ օրն է ձիւն է գալիս, որ բարձրացել է 3 արշին։ Շատ տների տանիքները փլվեցին. գնացքները չեն գալիս։

ՕԴԵՍՍԱ։ Անյայտ պատճառից հրդեհ ծագեց Ֆուտրանի ջրաղացում։ Վնասը 300 հազար րուբլի է։

ՋԷԴԴԱ։ Երևաց ժանտախտ։

Խմբագիր՝ ԱԼԷՔՍԱՆԴՐ ՔԱԼԱՆԹԱՐ
Հրատարակիչներ՝ Ա. ՔԱԼԱՆԹԱՐ
Յ. ՏԷՐ-ՄԱՐԿՈՍԵԱՆ
Հ. ԱՌԱՔԵԼԵԱՆ

Տ Ե Ղ Ե Կ Ա Տ Ո Ւ

Բ Ժ Ի Շ Կ
Ա. ՄԽԻԹԱՐԵԱՆՑ
Սիֆիլիս, միզասեռական, վեներական և կաշուի հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը
ամեն օր (առաւօտեան ժ. $12^1/_2$—2.
(երեկոյեան ժ. 5—7.
Կիրակի օրերը միայն առ. ժ. 11—$12^1/_2$.
Հասցէն՝ Սօլօլակ, Բէհբութեան փ., № 33.
(ա. օ.) 1044. 100—59

Բ Ժ Շ Կ Ա Պ Ե Տ
Ա. ՔԱԹԱՆԵԱՆ
Ներքին և ջղային հիւանդութիւններ։
Ընդունելութիւնը
ամեն օր | առաւօտեան 9—12 ժ.
| երեկոյեան 5—7 ժ.
Միքայէլեան փողոց, № 27.
(ա. օ.) 1087. 100—53

Բ Ժ Ի Շ Կ
Խ. Բ. ՄԵԼԻՔ-ԷՅՆԱԹԵԱՆ
Մասնագէտ սիֆիլիս, վեներական, միզասեռական և կաշուի հիւանդութիւնների։ Հիւանդների ընդունելութիւնը՝ առաւօտ. ժամը 9-ից մինչև 10-ը, երեկոյեան ժամը 5-ից մինչև 7-ը։
Կսենիևսկայա փ., № 6, «Վէրցել» հիւրանոցի մօտ։ (ե. հ. շ.) 955. 100—41

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

4-ԱՄՍԵԱՅ
Հաշուապահական կուրսեր
Երկու սեռի անձանց համար
ՅՈՎՀԱՆՆԷՍ ԶԱՔ. ՍՏԵՓԱՆԵԱՆԻ
Պարապմունքերն սկսվում են յունվարի 15-ից։
Михайловскій пр., № 16—18 (Михайловскій тип.) помѣщеніе его Торговой школы.
(30,31,1,6) 1402. 4—1

Ցխինվալի հայոց ս. Աստուածածնի եկեղեցու համար հարկաւոր է թեմական դպրոցն աւարտած
քահանայ կամ քահանայացու,
որը պետական և հայոց եկ.-ծխ.-դպրոցների կունենայ տարեկան 400 րուբլի ռոճիկ, իսկ ծխական արդիւնքը տարեկան 5—600 րուբլի։ Մանրամասնութիւնների և պայմանների համար դիմել՝ Въ Цхинвалъ (Горійскій уѣздъ), Попечительству цхин. арм. церковно-приходскаго училища.
Հոգաբարձութիւն
(հ. հ. շ.) 1394. 3—1

1881 г. 1896 г.
ПОСТАВЩИКИ ДВОРА
ЕГО ИМПЕРАТОРСКАГО ВЕЛИЧЕСТВА
Э. ИММЕРЪ и СЫНЪ
МОСКВА, Мясницкая ул.
СѢМЕНА
огородныя, цвѣточныя, сельско-хозяйственныя и др. высшаго качества, испытанной всхожести, въ отборныхъ сортахъ.
СѢМЕНА отъ МОРОЗОВЪ НЕ ПОРТЯТСЯ.
ПРЕЙСЪ-КУРАНТЪ ВЫСЫЛАЕТСЯ ПО ТРЕБОВАНІЮ БЕЗПЛАТН.
Иллюстрированный к[illegible] съ 700 рисунками [illegible]
(39,10,20) (М. 397669) 1351. 3—1

ՅԱՏԿԱՊԷՍ ԽԱՂԱԼԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՆՈՐ ԲԱՑՎԱԾ
ՄՕՍԿՕՎԵԱՆ ԽԱՆՈՒԹ
Գօլօվինսկի պր., № 19, Արտիստ. Ընկ. շինութ. և Մայլէլսօնի խանութի միջև.
Առաջիկայ տօների համար ստացված են՝ 40,000 հատ զանազան տեսակ ԽԱՂԱԼԻՔՆԵՐ—գները 10 կ. սկսած մինչև 25 րուբ.։ 650 հատ զանազան տեսակ կրթիչ ԽԱՂԵՐ—25 կ. սկսած մինչև 10 ր.։ 520 հատ զանազան տեսակ ԶԲԱՂՄՈՒՆՔՆԵՐԻ ԱՐԱՐԿԱՆԵՐ և ՖՈՒԿՕԴԻԼՆԵՐ—25 կ.—15 ր.։ 120 հատ զանազան ԶԲԱՂԵՑՈՒՑԻՉ ԱՌԱՐԿԱՆԵՐ բոլ Ֆրէբէլի։
Տօնածառի զարդարանքներ
մեծ քանակութեամբ
Տօնածառի համար պատրաստի կոլլեկցիաներ—2 ր. սկսած մինչև 25 րուբլի։
Տուալէտային զարդարանքներ և առարկաներ՝ ընծայաբերելու համար։
ՎԱՃԱՌՔԸ ՄԻԱՆԳԱՄԱՅՆ ԱՌԱՆՑ ՍԱԿԱՐԿՈՒԹԵԱՆ
Գները նոյնն են, ինչպէս Մօսկվայում։
Հասարակական և դպրոցական հիմնարկութիւնների տօնածառերի համար 5% զեղչ։
Ուղարկում ենք վերադիր վճարով նախապէս ստանալով արժէքի կէս մասը։
(յ. 1) 1251. 10—7

ԳԵՂԱՐՈՒԵՍՏԱԿԱՆ
ԳՐԱԿԱՆ
ՔԱՂԱՔԱԳԻՏԱԿԱՆ
ՊԱՏԿԵՐԱԶԱՐԴ
ՀԱՆԴԷՍԸ
դպրոցական աշակերտ ունեցող ընտանիքների համար ԱՂԲԻՒՐԻ հետ միատեղ բոլոր պրէմիաներով, յաւելուածներով դպրոցական աշակերտի հասցէով ՏԱՐԱԶԻ XX-ամեակը լրանալուն և 21-րդ տարեշրջանը թևակոխելու առիթով 10 րուբլուց իջեցնում ենք առաջիկայ 1910 թ. համար 5 ր.։ Հասցէ՝ Тифлисъ, Редакція «ТАРАЗЪ».
(ա. օ.) 1393. 10—3

☞ ՀԻՒՐԱՆՈՑ „ԿԱՎԿԱԶ“ ԹԻՖԼԻՍՈՒՄ ☜
Տ Է Լ Է Ֆ Օ Ն № 358.
Սրանով պատիւ ունենք յայտնելու պ. պ. յաճախորդներին, որ Նոյեմբերի 20-ից հիւրանոցի ճաշարանում
ԿԱՐԵԼԻ Է ՍՏԱՆԱԼ ՅԱՆԿԱՑԱԾ ԸՆԹՐԻՔ
Բաղկացած 1 կերակրից և 1 թաս սուրճից—50 կոպէկ։
Հիւրանոցն ունի՝ յատկապէս պատուէրների համար՝ նորաստեղ դահլիճ, ուր ընդունվում են պարահանդէսների, հարսանիքների և ընկերակցական ճաշկերոյթի պատուէրներ։
Դահլիճն ունի պիանինօ և առանձ՝ սենեակներ։
Յարգանքով՝ Ի. Կօռչիլայա և Ն. Միխարուլիձէ
(օ.մ.) 870. 100 53

ՍՈՒԷԻՏՐԻ ԵՒ ՍՐԴԻՒՆՍԲ. ՄԻՆԻՍՏՐ. ՏՆՕՐԻՆՈՒԹԵԱՆ ՆԵՐՔՈՅ ԳՏՆՎՈՂ
Տ. Մ. Փ Ի Լ Օ Յ Ե Ա Ն Ի
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԳԻՏՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԿՈՒՐՍԵՐՈՒՄ
Թիֆլիս, Միխայլեան պր. 24/4,
Տալիս են երկսեռ անձերին մասնագիտական առև. տր. կրթութիւն։
Դասընթացքն աւարտողներին տրվում են ատեստատներ։
ԳՈՐԾՆԱԿԱՆ զբաղմունքները կատարվում են կուրսերում՝ Լոնդոնի Pitman և Պարիզի Pigier դպրոցների ձևով կազմակերպված Muster Comtori-ում։ Նիւթերն առնվում են բէալ կեանքից։ Առարկաներն են. ա) պարտադիր. 1) Հաշուապահութիւն (պարզ, իտալ., գերմ., ֆրան., ամերիկական, բանկային և գործարանական, 2) Առևտրական թւաբանութիւն, 3) Քաղաքատնտեսութիւն, 4) Օրէնսգիտութիւն (առևտրական իրաւունք, մուրհակի կանոնադրութիւն), 5) Առևտրական թղթակցութիւն, 6) Թւաբանութիւն համրիչի վրա, 7) Վայելչագրութիւն, արագագրութիւն (ամենաարագ ձեռքի ուղղումի). բ) ոչ պարտադիր. 1) ՕՏԱՐ ԼԵԶՈՒՆԵՐ, 2) սղագրութիւն, 3) դակտիլօգրաֆիա (ռեմինգտօն և ուր.) և 4) առևտր. թղթակցութիւն օտար լեզուներով։ Զբաղմունքները կատարվում են և զատ-զատ։ Ունկնդիրների թւի շատութեան պատճառով բացվում է զուգրնթաց բաժանմունք։ Ունկնդիրների թիւը սահմանափակված է։ Պարապմունքների սկիզբը սեպտեմ. 15-ին։ Խնդիրների ընդունելութիւնը առ. 10—12 ժ. և եր. 4—7 ժ.։ Ծրագիրը և կանոններն ուղարկվում և տրվում են ձրիաբար կուրսերի շէնքում։
Կուրսերի հիմնադիր՝ առևտր. գիտութեան կանդիդատ՝ Տ. ՓԻԼՕՅԵԱՆ
(ու. կ. չ.) 1387 20—3

Բ Ա Ց Վ Ա Ծ Է Բ Ա Ժ Ա Ն Ո Ր Դ Ա Գ Ր Ո Ւ Թ Ի Ւ Ն
1910 Թ.
„ՍՈՒՐՀԱՆԴԱԿ“
(Ե Ր Կ Ր Ո Ր Դ Տ Ա Ր Ի)
Գրական, քաղաքական, հասարակական եւ առեւտրա-արդիւնաբերական
Լ Ր Ա Գ Ի Ր
Լոյս է տեսնում առժամանակ
ՇԱԲԱԹԸ ԵՐԵՔ ԱՆԳԱՄ
Չորեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը
Մօտիկ աշխատակցութեամբ Ղ. ԱՂԱՅԵԱՆԻ և ՆԱՐ-ԴՈՍԻ
«ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ» բաժանորդները կարող են ստանալ «ԽԱԹԱԲԱԼԱ» երգիծաբանական շաբաթաթերթը պակաս վճարով։
Բ Ա Ժ Ն Ե Վ Ճ Ա Ր Ն Է

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ (Առանձին)			ԽԱԹԱԲԱԼԱ (Առանձին)
Տարեկան	7	—	Տարեկան Թիֆլիսում 4 ր., դուրսը 5 ր.։
Կէս տարին	4	—	Կէս տ. » 2 ր., » 3 ր.։
Երեք ամիսը	2	25	3 ամս. Թիֆլիսում և դուրսը 1 ր. 50 կ.։
Մէկ ամիսը	—	75	Մէկ ամիսը — 50 կ.։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ և ԽԱԹԱԲԱԼԱ
(Միասին)

Տարեկան	10 — —	Երեք ամիսը	3	— 50
Կէս տարին	6 — —	Մէկ ամիսը	1	— 20

«Սուրհանդակում» յայտարարութիւնների համար վճարում են տողին՝ առաջին երեսի վրա—10 կոպէկ, վերջին երեսի վրա—5 կոպէկ։
Հատով («Սուրհանդակի») համարն արժէ ամեն տեղ 5 կոպէկ։
Հասցէն Ռուսաստանի համար՝ Тифлисъ, редакція газ. „Сурандакъ“. Արտասահմանի համար՝ Tiflis, Rédaction du journal „Sourhandak“.
Հրատարակիչ՝ Գէորգ Չիլինգարեան Խմբագիր-հրատ. Աւս. Երիցեան
(ա.օ.) 1348. 10—10

НАСТОЛЬНАЯ
ЭНЦИКЛОПЕДІЯ
въ 3 хъ томахъ подъ общей редакц. В.В. БИТНЕРА

Трудъ, который даетъ отвѣты на встрѣчаемыя каждымъ—независимо отъ его образованія—затрудненія при чтеніи и въ житейской практикѣ съ 3000 рис., 100 табл., 27 картами и множ. снимковъ съ худож. произведеній и видами рус. городовъ, печат. цвѣт. красками; объяснено 45,000 сл. и иностр. выраженій. Наст. Энц. отлич. КРАТКОСТЬЮ и ПОЛНОТОЙ. Ред. отдѣл.: С. К. Исаковъ (пом. хр. Муз. Акад. Худ.)—архитект. ваяніе, живоп. и эстетика: проф. А. Г. Тимофѣевъ—правовѣдѣніе и законодательство; В. В. Битнеръ—біологія, психіатрія, оккультизмъ, археологія; д-р. Н. А. Вигдорчикъ—медицина и гигіена; доц. Бернштейнъ—музыка и ея исторія; инж. М. С. Тихановъ—математ., физика, техн. (до сл. Неаполь). Отдѣльныя статьи—проф. Генкель, учен. агр. Кособротовъ, В. Ѳ. Тотоміанцъ, Б. Бразоленно, Леонидъ Петровичъ, А. Николаевъ, Науровъ, Дмитріевъ и др.
ЦѢНА: 7 р. 50 к., для подписчиковъ „Вѣстника Знанія“ 6 р. 50 к. Въ изящн. перепл. на 2 р. 50 к. дороже. т. е. 9 р. 70 к., для подписчик. „Вѣстника Знанія“ 8 р. 70 к. Вносящіе деньги сразу получаютъ изданіе полностью. Допускается разсрочка по 2 руб. въ мѣс. Подробн. объявл. каталогъ издательства „Вѣстн. Зн.“ высылается безплатно.
С.-Петербургъ, Невскій, 40. Главная Контора „Вѣстникъ Знанія“.
(20,30) (П. 172541) 2—2

Электропечатня Ав. Мугдусіакопова съ С-ми. Большая Ванкская № 3.